

comble de ses faveurs les Allemands; « Rex (Leo) qui semper Alemanos dilexit », dit le chanoine d'Oldenburg Willebrand, qui l'année même de cette donation royale, visita et les possessions des Chevaliers ses compatriotes et la Cour de Léon.

Héthoum I, le successeur de celui-ci ajouta aux donations de son beau-père, par sa Chrysobulle de 22 Janvier 1236, la fameuse ville de Haroun ou Haronia, « nominatam et speciosam civitatem Haroniam, cum sui dispositione, confinij » etc., avec environ 30 villages et couvents. Il les transmit par Privilège, à Hermann de Saltza le brave et célèbre Maître de l'Ordre Teutonique (mort en 1240 à Barlette de la Pouille) et au Frère Littold ou Loutold le Commandeur des Allemands dans le Royaume arménien.\*

Jean le consignataire de notre Acte, est plutôt un successeur de ce dernier que le Grand Maître de l'Ordre lui-même, bien que Constantin le nomme *ամենամեծ մայրառն Ոսպիթրուն Սլամիացն*, « le très-grand Maître des Hospitaliers Allemands »; car nous savons que le vrai Grand-Maître de l'Ordre de cette époque était Hannon de Sangershausen, qui passa tout le temps de sa maîtrise (1263-1275) en Allemagne à combattre les Prussiens. Probablement notre Jean était le chef de tous les Commandeurs Teutoniques restés dans l'Orient, qu'ils abandonnerent définitivement après la prise, par les Egyptiens, de S. Jean-d'Acre (1291), boulevard de leur puissance.

9 L'arménien *բաժ* (*page*) est presque un homonyme du péage, comme nous avons traduit; mais c'est une pure similitude et non pas une identité: car *բաժ* qui est la racine du mot *բաժին* (*pagine*) portion, signifie chez nous plutôt l'impôt ou le droit de la douane que le péage proprement dit, bien qu'ici selon nous c'est le cas d'appliquer ce dernier sens. L'établissement ou la maison des douanes se nommait chez nos Arméniens de la Cilicie *բաժատուն* (*pagedown*), vocable que les traducteurs de ces Actes royaux ont traduit en le latinisant par *passidonium*.

10 Le parchemin étant lacéré en cet endroit, il nous manque le mot Chevaliers.

11 Il n'est pas douteux que cette maison des Frères Allemands ou leur douane, était dans un passage rétréci par la configuration des terrains, et fréquenté par des voyageurs et des marchands.

12 On voit en effet sa signature au bas de l'Acte, simplement et purement écrit d'une fort mauvaise écriture et avec entrelacement des caractères 'ի Կոստանդնուքի օրհանգրվան, par Constantin. Comme le parchemin est coupé de tous cotés, on n'y trouve aucune

autre signature, ni des contractans ni des témoins.

13 Cette Ère commence le 11 Juillet de l'an 552 de Jesus-Christ, et comme le Calendrier arménien n'admet pas les années bissextiles, l'an 720 de son Ère commence le 13 Janvier 1271.

14 Tous ces honorables Chevaliers paraissent être Arméniens. Le titre honoraire *Sir* ou *Sire* était adopté par l'aristocratie arménienne du royaume de la Cilicie. Le nom *Կոստանդ* (*Gosdantz*) s'y rencontre souvent; *Գոյնեթ* (*Couilner*) est le surnom d'une famille; à l'époque de notre Acte vivait un prêtre Etienne Couilner ou *Գոյն Երիցանց* (*Couiln-Yéritzantz*) dont nous possédons quelques manuscrits. Quant au nom Renald, *Քաղնաղա* (*Erenaghd*) il n'est pas usité comme les autres chez nous.

15 Cette petite Ère qui est répétée deux fois par erreur, n'est autre que l'Indiction romaine. En effet cette année 1271 était 14 de l'Indiction.

P. LÉON M. ALISHAN

### ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ

### ԵՒ ԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔՆ

Ա

Նախնական և տնական դաստիարակութիւնն  
Բարսեղի. — Դպրոցական ընթացքն. — Արեւիկ  
և Բիւզանդիոն. — Որտեղից բռնած  
նա՞ր. — Բարսեղի յատուցանութիւնն և 'ի  
Հայրենիս դարձը. — Իր անկախութիւնը  
դուրսէն. — Նոր կենաց սկիզբն. —

Կապագոյնից մառախլապատ երկնից տակ կա-  
տարեց Բարսեղ իր նախնական և առանին գաս-  
տիարակութիւնը: Եմիլիա մայրը և Մակրինա  
քոյրը և միւս եղբարքը, 'Գրիգոր' որ ետքը Նիւ-  
սացւոց եպիսկոպոս եղաւ, Պետրոս՝ ետքը եպիս-  
կոպոս Սեբաստիոյ, ասոնք ամենքը բարեհամբոյր  
և սրբազան ընտանիք մը կը ձեւացնէին քրիստո-  
սական կրօնից, չորրորդ դարուն մէջ: Արդէն ի-  
րեն Մակրինա քոյրը իր առաքինութեանց առա-  
ւելութեանը համար՝ առանձնութեան մէջ աղջը-  
կանց հոգևոր գաստիարակութեանը կը պարա-  
պէր. և տան մէջ մնացելոց զբաղմունքն ուրիշ  
բան չէր բայց եթէ սաղմոսել և աղօթել, հոգևոր  
գրեանց ընթերցմամբ զուարճանալ և գործնա-  
կանապէս առաքինութեան կրթել զիրենք. ահա  
այս նախկին կրթութեամբ էր որ ապագայ այնպի-  
սի մեծահամբաւ եպիսկոպոսունիք եկեղեցւոյ գա-

\* Voir pour ces deux Chartes (de Léon II et de Héthoum I,) délivrées aux Chevaliers Allemands, dans le Trésor des Chartes d'Arménie, etc., imprimé à S. Lazare, 1863.

հերու վրայ պիտի ելլէին՝ աստուածային ձայնը հնչեցնելու: Կէսք այս դաստիարակութեամբ գոհ ըլլալով իրենց ասպարէզը կ'ելլէին, բայց բազմագոյնք ևս՝ հռետորաց, իմաստասիրաց և քերականաց դպրոցները դեգերելով, երկայն ժամանակէ ետև համբարեալ գիտութեամբ կ'երևային աշխարհքիս վրայ: Առաջին ընթացքը բռնեցին Բարսեղի միւս եղբարքը, բայց ինքն և իր Գրիգոր եղբայրն՝ անցան այն դպրոցներէն, սորվեցան յաղթել աշխարհական անսանձ լեզուներու, որոնք պռոտախօսութեամբ կրնային միայն խռովութիւն հանել, անմեղաց միտքը որսալ և որոգայթի մէջ ձգել զիրենք:

Այն ժամանակները շատ դպրոցներ կային յարևելս, յորս քրիստոնէայք և հեթանոսք առ հասարակ իրենց ուսումը կ'ընէին. ինչպէս, ՚ի Պաղեստին, զոր երևելի « Հռետորական ճաշակով », և յԱլեքսանդրիա՝ զոր « Ամենազգի ուսմանց շտեմարան » կը կոչէ Նազիանզացին՝ իր եղբորը Ներքողինին մէջ: Աննշան չէին նաև Կեսարիայն կամ հին Մաժակայ և Նէոկեսարիայն, ուր աւելի կը յաճախէին մերայինք ալ դեռ չսկսած ՚ի Բիւզանդիոն և յԱթէնք երթալու: Բայց ամեն ժամանակ անհամեմատ գերագոյն համարեալ էին Աթէնք և Բիւզանդիոն, իբրև կեդրոն բոլոր յունական գաւառաց: Արդ Բարսեղ նախ անցաւ ՚ի Կեսարիա և ՚ի Նէոկեսարիա, նախնական ուսմունքը հոն վճարելու, որ էր քերականութիւնը. բայց ոչ արդի քերականաց ոճով. այլ իրենցը կանոններ կ'աւանդէր, քերթողական ճաշակ կու տար համբակաց, և ետքը կը պարունակէր նաև Պատմագիրքը կարգալու մասնաւոր կանոններ: Ասոնք ալ Բարսղի համար շատ թեթև բաներ էին, և կը փափաքէր աւելի բարձրագոյն բաներու ետևէ խնալ. անոր համար ընթացքը ուղղեց դէպ ՚ի Բիւզանդիոն, և անկէ յԱթէնս, ուր իրեն աշակերտակիցներ ալ ունեցաւ, սրտակից և սիրակից Նազիանզացին Գրիգորը, և զՈւրացոյն Յուլիանոս: Իսկ իր ուսուցչաց մէջ երևելագոյնք էին քրիստոնէայ հայկազն Պրոյերեսիոս կամ Պարոյր, որուն գովասանքը ութը տող վեցոտանի վերտառութեամբ աւանդեց մեզ իր աշակերտն Գրիգոր Աստուածաբանը, որուն վերնագիրն է « Ի Պրոթերօս ԾՈՍՏ ԻՄՈՍՏՈՎ (կամ ՍՈՓԵՍՏԵՍ) » . իսկ մեկալ երկուքը Հիմերոս և Լիբանիոս հեթանոսք էին, և ցայսօր ունինք իրենց ճառերը, որոնք անջնջելի յիշատակք են այն դարուն արտաքին պերճախօսութեան: Այս ճառախօսաց ոճը խուկած խճուղած է բազմագիմի այլաբանութեամբք, մէջ ընդ մէջ պարբերութեամբք և մթին բացատրութիւններով. միով բանիւ՝ թէպէտ յունականք են, սակայն ասիական ճապաղութեամբ լցուած. այս ոճս է որ յետագայ դարերու մէջ ալ կը նշմարուի. որոյ օրինակ մը կրնանք համարիլ և Ս դարու դպրոցաց գասագիրք՝ Մովսեսի անուամբ յիշատակուած « Պիտիոյ գիրք »: Ասոր մէջ յայտնի կը տեսնուի որ հռետոր մը աշակերտին նիւթ կուտայ ճառեր շարագրելու, չկորսնցունելով նաև առաքինութեան նպատակը: Սակայն այս Գ դարուս մէջ դպրոցաց գործածական մատեանքն էին Հոմերոսի Իլիականն և Ոդիսականն. անկէ կը քաղէին իրենց արիութեան, առաքինութեան բոլոր օրինակները, և անով կը կրթէին իրենց միտքը և սիր-

տը: Իսկ այն տեղերը ուր հոմերական աստուածները քան զանասուն կ'անբանանան, ուր ալ չեն երևիր դից և դիցուհեաց շնորհք, այնպէս խորշելով կը փախչէին՝ ինչպէս Ոդիսևս ՚ի Սիրենայից. բայց ընդ հակառակն, ուր առաքինութեան օրինակ մը կը նկարագրէ Քերթողաց հայրն կամ ուր աստի մը պարսաւ կ'ընէ, հոն ահա վարպետը կը ճոխանար, կը բացատրէր, թէ նաև հեթանոսք ունին իրենց գեղեցիկ առաքինութիւնները՝ որոնց պէտք է ամենայն դք նկատի և ջանայ նմանելու: Զոր օրինակ երբոր Կեփալլենացուց զօրագլուխը նաւաբեկութենէ զերծեալ՝ մերկ ցամաքը կ'ելլէ, Նաւսիկա դշխոյն փոխանակ ծանակելու՝ այս տողս կ'արտաբերէ. « Ոչ մարդոյ անըզգամի իցես հանգոյն և չարաշուէր »: Առաքինութեան չքնաղ օրինակ մ'էր և Եսիոդեայ ստորագրութիւնը՝ առաքինութեան և մոլութեան ճամբաներուն վրայ.

« Զչարութիւն՝ հեշտին ՚ի բուռն է արկանել և միախուռն,  
 Քանդի հարթ է ճանապարհ և մօտ առ ոտս  
 առ երի կայ.  
 Իսկ առ բարեաց՝ դիքն անմահ եդին ընթեր  
 քիրան և վաստակ,  
 Զի ուղղորդ է՝ երկարաձիգ հանէ ընդ այն  
 դիւր արահետ.  
 Զառաջինն ապառաժուտ, այլ գամ մ'ի  
 ծագն ՚ի վեր ելեալ՝  
 Այնուհետև հարթ ամենայն, թէպէտ և  
 խուժ և վրշտմբեր »:

Բայց քան զամենայն առաւել զարմանալի և յափշտակիչ մտաց է Քսենոփոնեայ առաքինութեան և յոռութեան անձնաւորելն, զոր ցայսօր ընթեռնելով կը զարմանամք. այս այլաբանութիւնը, զոր պիտի թարգմանեմք, Պրոտիկոս իմաստասիրին է, որ Սոկրատայ, Եւրիպիդէսի և Թերամենեայ և Իսոկրատայ վարպետն էր. և անկէ քաղելով ընդարձակած է Քսենոփոն իր « Սոկրատեան յիշատակարանաց մէջ. « Հերակլեայ յարբունս սիոցն « ժամանեալ, յորժամ ինքնիշխանք ոմանք թուին « դեռահասակքն՝ դառնալ յառաքինութեանն « կողմ կամ ՚ի չարութեանն զառածանել, յերկ- « քայս էր եթէ յոր կոյս զերեսս իւր հաստա- « տեսցէ. և ահա կանայք երկու յաղթահասակք, « մին գեղեցիկ տեսանելով և ազատաբարոյ, պար- « կեշտութեամբ զմարմինն զարգարեալ և զտեսա- « նելիս ցածութեամբ, կերպարանք զգաստք և սպի- « տակազգեստ. իսկ միւսն՝ հատեալ յօրացեալ « ՚ի թանձրամտութիւն և յաղակատանս. և այն- « պէս շարեալ ՚ի սնգոյր և ՚ի ծարիր, որպէս զի « քան որչափ էրն՝ ՚ի սպիտակութեան և ՚ի կար- « մրութեան երփն հարկանիցի, և ՚ի վեր քան ըզ- « չափն ուղղաբերձ երևեսցի հասակաւ. աչք ընդ- « ոտք, և ՚ի հանդերձիցն մանաւանդ փայլեսցէ « գեղ նորա. ստէպ ստէպ զաչն զիւրև ածէ, դէտ « ակն ունի եթէ իցէ դք ուրիք յինքն ակնկառոյց, « և բազում անգամ ընդ ստուերս իսկ անձինն « պշնու »: Ահաւասիկ հեթանոսի մը գրիչը, որ այսպէս սքանչելի նկարագրութեամբ կը սկսի իր խրատը, զՆերակլէս համոզելու, որ չըլլայ թէ մոլութեան պատրանքներէն խաբուած՝ ինքզինքը խորխորատը ձգէ: Հոմերոսի և Ողբերգակաց ընթերցմանը կը յաջորդէին աւելի հաստատուն և ծանրաբարոյ գրիչք՝ որք կարծես մեծապէս յար-

մարք էին Բարսղի ամուր, խոհուն և որոճացող մտացը. Երողոս, Թուկիդիտէս, Իլիմոսթէն և ամենէն գլխաւոր իմաստասէրն իմաստասիրաց Պղատոն: Բայց այս գրեանց ընթերցմանէն վերջը կը մնար իմաստասիրականին էական կէտը՝ որ է բնագանցութիւնը, ուր քիչերը սիրտ կ'ընէին մտնելու. և այս քիչերուն մէջ աւելի յաջողագոյն Բարսեղ նաւարկեց այս անգնդոց մէջ. և այն անխմանալի առեղծուածները՝ զոր Պղատոն, Արիստոտէլ և Պղոտինոս իրենց մատենից մէջ ցաներ ցրուեր էին՝ խառնիխուռն անկերպարան նիւթոյն պէս՝ առաւ ամփոփեց, պարզեց լուսաւորեց իր հրաշակերա Վէյօրէի ճառերուն մէջ:

Բարսեղ, Նագիանդացին և Յուլիանոս՝ աննման աշակերտակիցք, միանգամայն կատարեցին իրենց ուսման ընթացքը: Յուլիանոսի կամքն էր ի սկզբանէ՝ որ զԲարսեղ իր կողմը որսայ. սակայն Նագիանդացին կանխեց իմացաւ անոր մտաց դաւաճանութիւնը, և աւելի սիրտը կը կապուէր Բարսեղի հետ, որպէս զի չըլլայ թէ իր սիրելին յափրջտակէն իրմէ: Հասաւ վերջապէս այն վայրկեանը՝ որ Բարսեղ և Նագիանդացին պիտի բաժնուէին իրենց սիրելի և պատուական ուսուցիչներէն և աշակերտակիցներէն, որք չորս դին առած կ'աղաչէին կը պաղատէին որ չթողուն մուսայից երկիրը և երթան ընկղմին Կապադովկիոյ մշուշին և մառախուղին մէջ. քիչ մը շարժեցաւ Նագիանդացին անոնց թախանձանքէն և յանձն առաւ ուշանալու. բայց զԲարսեղ չկրցան վայրկեան մ'ալ իր նպատակէն ետ կեցրնել՝ ոչ աղաչանք և ոչ իսկ սպառնալիք. և ճամբայ ինկաւ դէպ 'ի հայրենիս:

Բարսղի պատմութեան գրեթէ այս կէտէն՝ յարաբերութիւն կը սկսի ընդ Բարսեղ և ընդ մեր Մեծն Ներսէս Պարթև. սա ալ իր ուսման առաջին ընթացքն 'ի Կեսարիա կատարելով, այն ժամանակները 'ի Բիւզանդիոն կը գտուէր, և հոն Ասպիոն անունով յոյն իշխանի մը աղջիկը առաւ. և ետքը դառնալով մտաւ Արշակ թագաւորի սպասաւորութեան: Կենք այս նկատմամբ Բուզանդայ տուած գովութիւնքը, որ և ամենայն պատմագրաց հետ համաձայն կ'ընթանայ. « Սա, կ'ըսէ, 'ի տղայութենէ սնեալ և ուսեալ 'ի Կեսարացւոց քաղաքին Գամբաց՝ ընդ « հաւատարիմ վարդապետօք, ցանկալի եղեալ « իւրոցն համարուեստն զուգակցացն: Այլ 'ի ժամանակին յայնմիկ էր 'ի վարս զինուորութեան « 'ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ...: Այր էր սա մեծ և բարձր « ցանկալի հոռակաւ, և վայելուչ գեղով... ան « ձանձրոյթ էր՝ և ունէր զնախանձն Աստուծոյ, « և եռայր սուրբ Հոգևոյն. այսպէս իսկ էր ամեն « նայնիւ կատարեալ յամենայնի: Եւ զաղքատս « և զտառապեալս այնպէս սիրէր և ակն ածէր 'ի « վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր՝ հասարակէր ընդ նոսա. և նեղելոց և « տարակուսելոց օգնական և վերակացու, և ջատագով ամենայն զրկելոց լինէր նա »:

Հասաւ նա Կապադովկիա, բայց գեռ աթենական շառաչքը դրաւած էին իր սիրտը և միտքը, յունական բարձրայօնութիւն մը կը նշմարուէր վրան՝ հելլէն բարակութեան հետ. ալ չէր խոնարհեր երթալ քրոջը քով և հոն քրիստոնէական կենաց քաղցրութիւնը զգալ: Իսկ իր

սրտակից բարեկամը, որ քան զնա ուշ հեռացաւ Աթէնքէն՝ սակայն կանխեց յանապատն, այս Լակոնացի և կծու յանդիմանութիւնը կը գրէ Բարսղի. « Չեմ ուզեր, կ'ըսէ, որ ինծի յանդիմանես « Տիրերիայ ձիւնը և ձմերուկքը. ո՛վ թշնամիդ « մառախոյ, որ հազիւ թէ ոտից մատուրներովդ « գետին կը շոշափես, օդապարիկ թռչնոյ պէս « մթնոլորտին մէջ կը ճախրես. հոս գեղեցիկ առողջ կեանք մը կը վայլենք մենք, մաքուր և « դանման պարզութեամբ կ'ապրինք. իսկ դուք « հեշտութեանց գրգութեանց մէջ ընկղմած, միշտ « 'ի հրապարակս կը թափառիք: Երեսպաշտութի « չեմ ախորժիր, ուղիղ կը խօսիմ. թող ինծի իմ « մառախուղս և դու Մաժակի փափկութեանց և « խրախճանութեանց տուր ինքզինքդ »:

Ո՛րչափ ծանր ազդեցութիւն չէին ըներ այս լուրը կշտամբանքս Բարսղի զգայուն և փափուկ սրտին, մանաւանդ որ այնպիսի մտերիմ սրտակցէ մը կ'ուղղուէր առ նա. բայց վերջապէս կակրղցաւ և զիջաւ. արթնցաւ իբրև 'ի խոր քնոյ, և մէյմը աւետարանին վրայ աչքերը դարձնելով ճանչցաւ թէ ինչ կորուսաներ ընել տուեր էր իրեն Աթէնքի ուսման սաստիկ յարուելին, և այս զղջական դարձի եկողի մը խօսքերը կ'արտաբերէր. « Երկայն ատեն ընդունայնութեան ետեւ ընկայ, « գրեթէ բոլոր պատանեկութիւնս սին և սնտաի « աշխատութեանց տուի. բայց վերջապէս բացի « մէյմը մրափած աչուրներս առ լուսաւորութիւն Աւետարանին Քրիստոսի. իմացայ թէ « իմաստութիւն իշխանաց աշխարհքիս ընդու « (նայնութիւն է. կ'արտասուէի անգագար կենացս խեղճ՝ վիճակին վրայ, և աղօթիւք կը « պաղատէի որ ձեռք մը զիս յափշտակէր և յաստուածային պատուիրանս առաջնորդէր: Սկսայ « նախ աշխարհային մալակոնած բարքս ուղղել « մաքրել. ետքը կարգալով յԱւետարանին՝ թէ « փրկութեան միակ և սպասով միջոցն է ունե « ցածը ծախել և աղքատաց բաշխել գինը, հա « ռաչանօք փափաքանօք կը փնտռէի եղբայրնե « ըէս մէկը՝ որ առ այս զիս առաջնորդէ »:

Այս աստուածաշնորհ փոփոխութենէ վերջը՝ յԵգիպտոս, յԱսորիս և 'ի Պաղեստին ճամբորդութեան ելաւ, որպէս զի ինքն ալ այն համբաւատենչ անապատականաց և սրբակրօնից օրինակովը զարգարէ իր հայրենիքը, միանձանց և միանձնուհեաց խղիկներով. և կարենայ առաքինեաց ոգիները ապրեցնել աշխարհքիս ընդհանուր աղաւաղութենէ, որ այն ատեն կրկին ճիւղ բաժնուած քրիստոնէութեան մեծամեծ փնտաներ կ'ըսպանար. մէկն էր կայսերութեան հակառակիլը քրիստոնէութեան, միւսն՝ որ դառնագոյն և ս հետեանքներ ունեցաւ՝ եկեղեցական հերձուածն: Երջեցաւ Բարսեղ այն անապատները և ժողվեց շտեմարանեց անհուն և բազմագիմ օրինակներ իր ապագայ ընթացիցը համար. դարձաւ 'ի բնակութիւն իւր, և հոն իր հոգեկցորդ սիրելոյն հետ միաբանելով սկսան իրենց մտաւորական ասպարէզը արշաւել: Մեծ փութով մը կը լուծէին և կը մեկնաբանէին Որոգիսեայ գրեանքը, որ քրիստոնէութեան Պղատոնն էր, և սպագայից հետախուզութեան և ծանր վիճմանց նիւթ կը պատրաստէին: Փոխանակ հեթանոս գրեանց՝ սրոնց նիւթքը արդէն ամբարած էին, շարունակ

սուրբ Գրոց կը զբաղէին, և իրենցմէ առաջ եղած Ս. Հարց մատենից: Այս անխոնջ աշխատանքէն ետքը Բարսեղ և իր բարեկամն Գրիգոր՝ եղան յետ մեծին Աթանասայ՝ եկեղեցւոյ մէյմէկ սիւնիք՝ արձանացեալ արիանոսութեան բուռն հեղեղատին դիմաց. և ոչ միայն իրենց հայրենեաց, ոչ միայն յունական եկեղեցւոյ, այլ ընդհանուր եկեղեցւոյ լուսաւոր ջահեր, այն խառնաշփոթ ժամանակաց մէջ. մինչև որ իրենց արեգակը մանալու առէն Անտիոքայ եկեղեցւոյ ծոցէն միւս այլ արեգակ մը ցոլաց յունական եկեղեցւոյ, տիեզերաքարոզ և մեծահամբաւ ԲԵՐԱՆՆ ՈՍԿԻ:

Բ

Արիոս և իր հերձուածը. — Ս. Արսնաս. — Կապադովկիոյ եկեղեցւոյն վիճակը. — Եռստարեայ Եղբայրութիւնը. — Բարսեղ ընդ Նագիանգացոյ կրօնաւորական կենաց հիմնարկուք. — Անոր հեղինակութիւնը և ազդեցութիւնը ընդ քովակերպի Արևելիս. — Կալունք. — Չատագոյնութիւն կրօնաւորական կենաց. — Եպիսկոպոսութեան փառասիրութեան նիւթ ըլլալը՝ ի կապադովկիա. — Ժողով կոստանդնուպոլիս. — Գիտական և պատմական կենսարիւն. — Երեսնամեայ ընտրութիւնը. — Բարսեղի և Մեծիկ Ներսեսի քահանայ ձեռնադրութիւնը. — Երեսնամեայ գծադրութիւնը ընդ Բարսեղի և հաշտութիւնը. — Երեսնամեայ մահը (370):

Արիոս՝ Աղեքսանդրիոյ գաղտնիքն բնազանցական գաղափարներով միտքը սրած և պղատոնական սկզբունքներով արբեալ՝ կ'ուզէր և զսուրբ գիրս և զքրիստոնէութիւն նոյն դրութեամբ մեկնաբանել. Պղատոնի Բանն (λόγος) նոյնացունելով աւետարանաց Բանին հետ՝ ժամանակաւոր, կրօնական քան զՀայր, որով և արարած կ'ընդունէր զՈրդին Աստուծոյ: Այս իմաստասիրութեան խարխուլ դրութիւնը այնչափ շառաչ հանեց յԱրևելս և յԱրևմուտս՝ որ յետ բազում ժողովոց և վիճմանց սուրբ հարց, դարձեալ մերթ կը դորանար մերթ կը նուազէր ըստ ազգեցութեան կայսերաց. և Աթանաս՝ որուն վրայ կայացած է գրեթէ ամբողջ դարու մը պատմութիւնը, քաղքէ քաղք հալածեալ և փախստական կը շրջէր, կը նզովուէր ի ժողովոց և յարիանոսաց: Շատոնց նա և ի կապադովկիա և ի կեսարիա լուսած էր այս ժանտախտիա ճարակիլը. և Բարսեղ իր սրահայեաց և հեռատես մտքը կը զննէր Կապադովկիոյ եկեղեցւոյն վիճակաւորաց փառամոլ և փառախնդիր դիմունքները. որոնք անկարող էին այն հեղեղին դիմանալ: Յիրաւի եկեղեցւոյ ծանր լուծ մ'էր նաև աշխարհական բունութիւնը, բայց Բարսեղ աղէկ ըմբռնած էր, թէ եկեղեցւոյ այնչափ փրատ չեն հասցուներ աշխարհական հալածմունք և իշխանութիւնք՝ որչափ ներքին և ընտանի աղաւաղութիւնք, կղերաց խանգարմունք և հերձուածոց խուժանն. անոր համար Բարսեղ բովանդակ փոյթն այն էր՝ որ այս երկրորդին դիմաց ամբարտակ մը կանգնէ, որուն միակ միջոց

կը համարէր միաբանակեաց կրօնք մը հաստատել, որ տիեզերական խանգարմունքէն ազատ՝ քրիստոնէութեան և բարոյականին պահպանութեանը աշխատին: Իրմէ առաջ նոյն միտքը ունեցեր և նաև ի գործ դրեր էր Եւստատիոս՝ Սերաստիոյ եպիսկոպոսը, զանազան եղբայրութիւններ հաստատելով. բայց ինքն և իրեններն շատ ողջամիտ կարծեաց տէր չէին երևար՝ նոյն ատեն արիանոսաց ինգրոյն նկատմամբ. վասն զի սաստիկ ոգևորեալ արիանոսաց դէմ, (որովհետև կրօնական ինգրոց մէջ շատ հեղ գոժուարին է միջին ճամբան ընթանալ) կարծես թէ Հոգւոյն սրբոյ վարդապետութեանը մէջ կ'ալէկոծէին: Շատ հանձարեղ էր Բարսեղի դիմունքը, բայց նա և շատ գոժուարին և գրեթէ անկարելի կ'երևար այնպիսի խռովայոյզ ժամանակ մը. չէր ուզէր աշխարհական վիճակաւորաց պէս ընկերութիւն մը կազմել՝ որք ամեն կռուոց մէջ մանեն ելնեն, վատահամբաւին և վատահամբաւեն, շատ անգամ իրենք իսկ կռիւ յուզեն, անձնական ատելութեամբք հալին մաշին, փառասիրութեամբ հիւծին. և ոչ ալ ընդ հակառակն՝ անապատաւորաց նման, որոնք աշխարհքիս դիմաց անձնասէրք և իւրասէրք կը կոչուին, բոլորովին անհաղորդ յաշխարհէ, անփոյթք ուրիշներուն փրկութեանը. այլ միտքը դրեր էր այնպիսի ընկերութիւն մը որ երկուքին ալ կցորդակից ըլլայ: Այս գրութեամբ և ոգևոլ շարժեալք են նա և բազում արևմտեան հիմնադիրք, որոց կրօնքը ցայսօր փառաւորութեամբ կը յարատևէ: — Ամենայն ինչ պատրաստ էր Բարսեղ, բայց կը պակսէր օգնական աջակից մը միատեղ աշխատելու. գրեց իր սիրելւոյն Գրիգորի, որ մեկէն շտապեց հասաւ առ նա, և սկսան մեկ սիրտ մեկ հոգի ժիրաժիր փութով վաստակիլ. քիչ ժամանակէն Բարսեղեան կրօնաւորաց ձայնը սկսաւ հնչել Կապադովկիոյ բազմաշառաչ սահմանները: Յետ երկուց ամուլից՝ երրորդ մ'ալ՝ ծերունին և ալեղարդն Գրիգոր, Բարսեղի սրտակցին հայրը, իրենց գործակից և վաստակակից եղաւ. այն շնորհազարդ ալևորն՝ որ մեր Ռըստակէսի Կեսարիայէն անցնելու ժամանակ Նիկիոյ ժողովքը երթալու՝ մկրտուեր էր Ղևոնդիոս հայրապետէն, և հիանալով կը պատմէ Խորենացին, թէ « Իբրև ել ի ջրոյն, լոյս շուրջ « փայլատակեալ զնովաւ, զոր ոչ որ ի բազմութեանէն ետես, այլ միայն Ղևոնդիոս՝ որ մկրտէրն, « և մերն Ռըստակէս, և Եւթաղ Եդեսիայ և Յակոբ Մծբնայ, և Յոհան Պարսից եպիսկոպոս, « որք նոյն շաւղօք ուղևորէին ի ժողովն »:

Նորահիմն մենաստանին կանոնները ինքը Բարսեղ անձամբ դրած և աւանդած է մեզ. որք որչափ ալ հիմակուան ժամանակիս բաղդատելով ծանր և գոժուար երևան, սակայն ինքը աղէկ հասկըցած էր իր ժամանակին ոգին. կարևորք էին խստութիւնք, մանաւանդ եկեղեցականաց՝ որոնց թուլութիւնն աններելի է: Նոյն կանոնքք քիչ շատ վերածուելով ըստ տեղեաց և ըստ ժամանակաց՝ գրեթէ ամեն կրօնից գործածածն է, մանաւանդ Արևելք ամեն տեղ նոյն կանոններով կը վարէին և կը վարին ալ ցայսօր: Եւ որ պարմանալին է ամեն վիճակէ խուռն կ'ընթանային հոն՝ աղատելու աշխարհքիս տապաւապեցուցիչ հոգերէն. աղքատք և որքք իրենց մանաւոր բնակարան և հանգստու-

Թիւն կը գանձին հոն. ինքն ալ գաղտնիք մը ունէր որսալու, զոր մտերմական թղթոց մէկուն մէջ կը յայտնէ, « Ահաւասիկ, կ'ըսէ, աղաւնի որ. « սալու արուեստը. ընտանի աղաւնոյ մը թեւերը « անոյշ ինկով ծխած արձրկէ, անոր անուշահո- « տու թենէ ձգուած՝ շարք մ'ալ անոր ետեւէն ա- « ղաւնոց կու գան. այսպէս բռնեցի քու Դիոնիսիոս « որդիդ ալ. աստուածային հիւթով մը խնկեցի « հոգւոյն թեւերը և քեզի զրկեցի, որպէս զի դու « ալ անոր հետ թռչիս գաս հոն՝ ուր ինքը կը բու- « նի » :

Շատք ինքնայոժար և այլք այս հանձարեղ որսորդութեամբ ըմբռնեալ կը դիմէին Բարսեղ միայնարանը, զոր ինքն Հոմերի Վալիսիոյ կղզւոյն հետ չէր փոխեր. բայց սկսաւ շառաչ մը, որ հասարակօրէն միշտ կը լսուի, թէ աշխարհս կը գատարկի, Վասպարակիան կը սպառի: — Լիբանիոս իմաստակը նախատական մտքով Սեա-ճարդի կը կոչէ. և ուրիշ մ'ալ կը գոչէ. Միթէ եպիսկոպոսունք քաղաք չէն բնակիր, ինչ օգուտ անապատներէ, միայնութիւններէ: Բայց արգեօք Բարսեղ չէր կրնար զիրենք պապանծեցընել, առջևնին դնելով թէ ամենայն ընտիր եպիսկոպոսք և եկեղեցականք ալ միայնութենէ կու գան. սակայն լռելը խոհեմութիւն սեպեց. ոչ միայն ինքն՝ այլ և վերջը ինքնին Ոսկերերան և այլք ի հարց. և ոչ ոք այն անխոհեմութիւնը ունեցաւ՝ ուղղակի զինքը պաշտպանելու, այլ անուղղակի կերպով, ոմն կրօնաւորութեան մեծութիւնը ցուցընելով, այլ ոմն անոր օգուտը. իսկ Նազիանզացին քերթողական օրինակով մը ամենուն պատասխան կու տայ. « Օր « մը ծիծառունք կը նախատէին զկարապս, թէ « ինչո՞ւ մարգամօտի չեն կենցաղիր, և չեն լսեցը- « ներ իրենց երաժշտութիւնը. այլ ճահճաց և « գետոց ափունքը կը բնակին, անապատ կ'ախոր- « ժին և կարճ կ'երգեն. և եթէ երգեն՝ այն ալ ի- « րենց մէջ, կարծես թէ երաժշտութենէ ալ կ'ա- « մրջնան. իսկ մենք ունինք քաղաքներ, ունինք « բազմամբոխ մարդիկ, ունինք հարսնիքներ, մարդ- « կանց հետ կը խօսինք կը ճառենք, մեր գրչ- « իսէն անցածները անոնց կը պատմենք, ինչպէս « Ատտիկէի հին գիպուածները, Պանդիոնը, Ա- « թէնքը, Տիրեւսը, Թրակիան, Ճամբորդու- « թիւնք. գիտութեանց վրայ կը զրուցենք, և թէ « ինչպէս երբեմն մարդիկ էինք՝ իսկ հիմայ թրու- « չունք եղած ենք: — Շաղակրատք, պատասխան « տուին կարապքն, երանի՛ մեզ. մարդիկ մինչև « մեր օտքը կու գան երաժշտութիւննիս լսելու, « երբոր թեւերնիս զեփիւռի բացած՝ անոյշ և « մեղմ ներգաշնակեմք: Իսկ եթէ կարճ կ'եր- « գենք՝ ալ աղէկ, որ իմանան թէ ոչ միայն գի- « տենք երաժշտութիւն, այլ և չափն ալ կը պա- « հենք, ու խառնաձայն շառաչներու հետ չենք « խառներ » :

Բարսեղ կը գիտէր ուշի ուշով իր միայնու- թեան դիտարանէն՝ թէ ինչ ոգիներ կը քալէին աշխարհքիս վրայ. շատ եպիսկոպոսաց նպատակն էր փառասիրութիւն, և եկեղեցականք յոտից մինչև ցգլուխ խանգարեալ էին. որուն վկայէ և Նազիանզացին. իսկ Բարսեղ իր արթնամիտ փութո- վը կը ճգնէր դարման մը մատուցանել այս խանգարմանցը, սակայն ժամանակի և ոչ դարմանչի կարօտութիւն կը զգար:

Դիանիոս՝ Կեսարիոյ եպիսկոպոսը, որ զԲարսեղ մկրտեր էր յետ դարձի նորա Աթէնքէն, տեսնա- լով անոր խոհական և հզօր հանձարը՝ եկեղեցւոյն գրակարգաց ըրաւ զինքը: Այս պատուով ներկայ գտուեցաւ Բարսեղ Կոստանդնուպոլսոյ ժողովքին, զոր ՚ի 359 թուականին գումարել տուաւ Կոստանդոս՝ Արիոսի, Եւդոքսիոսի և Այեթիոսի խնդրոց վրայօք: Աթանաս գեռ ևս փախստական կը պարտէր, և չէր կրնար ներկայ գտուելով Եր- րորդութեան խորհուրդը պաշտպանել այս ժողովքիս մէջ, բայց Բարսեղ իրեն զօրաւոր լեզու- վը անոր անկը բռնած էր. սակայն երբ Կոստանդ ժողովականաց առջև դրաւ Ռիմինիի վճիռը որ ստորագրեն, Բարսեղ փաստիւք ընդգիմանալէն ետքը՝ ձգեց ժողովքը և Կապադովկիա փախաւ, ցուցընելով որ ոչ բռնութեամբ կ'ընկճի և ոչ սպառնալեօք, ինչպէս շատեր և չկարծուած ան- ձինք թոյլ գտուեցան և ստորագրեցին: Դիանիոս իր եպիսկոպոսը գրեթէ միշտ ստորագրութիւն տուած էր Աթանասի աքսորանացը, և չէր քննած թէ Որդին Աստուծոյ՝ ομοούσιος համոզոյ պէտք էր ըսուիլ Հօր՝ ոչ եթէ՝ ομοιοούσιος նմանօր. այնչափ բարակ մտաց տէր չէր որ յովա գրի մը համար խնդիրներ հանէ. նախ յԱնտիօք (341) նշովեց զԱթանաս և Գէորգ անունով մէկը Աղեքսանդ- րիոյ աթոռը գրաւ. նոյն ժողովքին առ Յուլիոս քահանայապետն գրած նախատական թղթոյն վրայ իրեն անունը կը գտուի. ՚ի Սարգիկեան ժողովի (347) դարձեալ նշովեց զԱթանաս և Յուլիոս. վերջապէս Կոստանդնուպոլսոյ ժողովքէն ետքը՝ երբ Գէորգ Աղեքսանդրիոյ՝ Ռիմինիի վճիռը բերաւ առ Դիանիոս, անոր ալ անխիղճ ստորագրեց: Գի- տէր Բարսեղ Դիանիոսի միամիտ պարզութիւնը. « Ի մանկութենէ հետէ, կ'ըսէ, հայրական գորո- « վով զիս սնոյց. կը զարմանայի իրեն յարգելի « կերպարանաց վեհանձնութեանը վրայ և քահա- « նայական արժանապատուութեանը. ու երբ « խելքս բացուեցաւ, սկսայ փորձելով հասկընալ « իր կատարելութիւնքը, իր պարզ կենցաղա- « կցութիւնը, համարձակ վարմունքը, իշխանական « ճոխութիւնը քաղցրութեան հետ խառնած ըլ- « լալը, զուարթ ու համեստ քաղաքավարու- « թիւնը. զասոնք տեսնելով՝ ՚ի նմա՝ համբաւաւոր « առաքինեաց դասէն կը համարէի » :

Հանգերձ այս ամենայն կատարելութեամբքը Բարսեղ չէր կրնար անոր քով կենալ, վասն զի այն ատեն կասկած կու տար թէ ինքն ալ անոր համախոհ է. ուստի թողուց և քաշուեցաւ: Շուտով զգաց Դիանիոս այնպիսի անձի մը կորուստը. և մահը վրայ հասնելով՝ կանչել տուաւ զԲարսեղ, և անոր բաղկացը մէջ հոգին աւանդեց, յայտնելով անկեղծ խոստովանութեամբ թէ ամենայն մասամբք և տառիւք կ'ընդգրկէ զնիկիական հաւատս:

Երբ Դիանիոսի մահուան լուրը հնչեց ընդ Կապադովկիա, ամենայն աստիճանաւորք ելան իրենց տեղերէն և կը շտապէին հասնելու և գրաւելու եպիսկոպոսական աթոռը. սակայն « ժողովրդեան աչքը աւելի իմաստուն էր, կ'ըսէ Նազիանզացին, քան եպիսկոպոսաց սիրտը ». ամենքը առաքինութեամբ զարգարեալ անձի մը դարձուցեր էին աչքերնին, որ դեռ չէր մկրտուած և կը կոչուէր Եւսեբիոս. միաբանեցաւ անոնց հետ

և Բարսեղ և ընտրեցին զՄեսերիոս յաջորդ Դիա-  
նիոսի: Նոյն ատենները 'ի Կապադովկիա էր և մեր  
Մեծն Ներսէս, որ Բարսղի հետ միատեղ նոյն  
ժամանակ քահանայական պատուոյ հասան, եր-  
կուքն ալ աստուածային շնորհօք ձեռնադրուե-  
ցան. բայց ետքը աւելի բարձրագոյն իշխանու-  
թիւն ընդունելուն ժամանակ աղաւնի մը Բարս-  
ղի գլխէն վերանալով անցաւ Ներսէսի գլուխը,  
գուցէ նշանակելով թէ երկուքն ալ մի և նոյն աս-  
տուածային Հոգւոյն հաղորդք, նմանօրինակ դէպ-  
քերով և քաղաքավարութեամբ պիտի կատարեն  
իրենց ընթացքը: Ներսէս ձեռնադրութիւնը ա-  
ռած Մեսերիոսէն դարձաւ 'ի Հայաստան. իսկ  
Բարսեղ մեծամեծ զբաղանաց ձեռք զարկաւ. ին-  
քը կը քարոզէր յեկեղեցիս և հոգևոր դարմանը  
կը մատուցանէր հաւատացելոց: Եկեղեցւոյ բեմբ-  
ասացութիւններէ աղէկ իմացուեցաւ Բարսղի  
հանձարը և պերճախօսական ոգին. երբոր ինքը  
կը խօսէր, կըսէ Սողոմենոս, լիբերան գովութեամբ  
կը հնչէր անունը: Զկրցաւ Մեսերիոս այնպիսի  
մեծ համբաւոյ մը դիմանալ, և գաղտնի նախան-  
ձու որդը զինքը միշտ կը կրծէր. բայց արդեօք  
Բարսեղ ալ իր կողմանէ գերակայութեամբ մը  
չէր ճոխանար քան զիւր եպիսկոպոսն. արդեօք  
երբեմն յուսական նրբամրտութիւնը չափազանց  
չէր գործածեր. արդեօք այնչափ գովութիւննե-  
րէն ինքն ալ բան մը չէր զգացած յինքեան: Սա-  
կայն դարմանք չէ որ սուրբք ալ երբեմն իրենց  
մարգկային սկարուութիւնը մէկ կամ միւս կողմով  
մը ցուցնեն, վասն զի իրենք ալ մարգիկ են: Ի-  
րեն ներբողաբանն՝ Նազիանզացին, քողարկեալ  
կը ծածկէ այս էջերս և լուութեամբ կ'ախորժի  
սահեցընել: Այնչափ կը բորբոքի Մեսերիոս՝ որ  
ալ զԲարսեղ քովէն կը հեռացընէ. բայց ինչ ա-  
հաւոր ձեռք 'ի Կեսարիա. «Մէկէն, կ'ըսէ Նա-  
զիանզացին, Մեսերիոսի դէմ կը զինին ընտիր և  
«իմաստուն գլուխքն, իրենց հովուին քշուելուն  
«վրայ զայրացեալ, վասնդաւոր ձեռնարկութիւն  
«մը կը սկսին մտաբերել. կ'ուզեն ձեռքիլ և բաժ-  
«նուիլ եկեղեցիէն. արդէն իրենց կողմն էր ժո-  
«ղովրդեան և պաշտօնէից մեծ մասն: Եւ այս ի-  
«րենց դիտումը կրնային իրեք պատճառներու  
«համար արգիւնացընել. Բարսեղ մեր իմաստա-  
«սէրներէն աւելի պատուեալ էր, միայն կամքը  
«բաւական էր խռովութիւն մը հանելու համար:  
«Իր հալածիչը, կռուով ընտրուած ըլլալով կաս-  
«կածելի էր քաղաքացւոյ. և կը գոչէին թէ բռ-  
«նութեամբ ընտրեալ է, և ոչ օրինաց և կանո-  
«նաց ուժովը: Վերջապէս կային Կեսարիոյ մեջ  
«արևմտեան եպիսկոպոսք՝ որ իրենց կողմը կը  
«ձգէին ամեն ուղղափառները. արդ ինչպէս պի-  
«տի վարի այս վեհանձն և խաղաղասէր մարդը:  
«Չէր կրնար ընդգիմանալ ոչ թշնամեաց հալա-  
«ծանացը և ոչ բարեկամաց յորդորանաց: Չէր  
«կրնար պատերազմիլ և ոչ հերձուլ եկեղեցւոյ  
«մարմինը՝ որ արդէն հերձուածոց գերի եղեր էր:  
«Մեր կարծեաց ետևէն կու գայ, մեզի հետ 'ի Պոն-  
«տոս կը փախչի:

Մինչդեռ այսպէս հօտն առանց հովուի կը մա-  
կաղէր՝ Վաղէս արիանոսաց գնդերով կը սկըսի դէպ  
'ի Արևելք առաջ խաղալ: «Յանկարծ, կ'ըսէ  
«Գրիգոր Նազիանզու, կը դիզուին գլխուներնուս  
«վրայ կարկտաբեր խիտ ամպեր, որք մահու և

«աւերածոց շանթեր կ'արձրկեն, և կը սպառնան  
«կորուստ այն եկեղեցեաց՝ որոնց վրայ ճայթեն:  
«Կայսեր մը յարձակումն է, կայսեր մը՝ որ ինչ-  
«պէս սիրահար է ոսկւոյ, այնպէս թշնամի Գրիս-  
«տոսի. հալածիչ յետ հալածչի. և եթէ չեղաւ  
«Ուրացող յետ ուրացողին (Յուլիանոսի)՝ սա-  
«կայն ոչինչ նուազ էր քրիստոնէից համար: Մե-  
«զի դէմ ըրած չուն՝ կատարեալ արշաւանք և  
«ասպատակութիւն մ'էր բարբարոսաց, որ ոչ  
«պարիսպներ, քաղաքներ և տուներ կը կործա-  
«նեն, այլ զոգիս: Իրեն հետ կը խաղային իր ո-  
«գւոյն արժանաւոր անձինք, մոլորեցուցիչք եկե-  
«ղեցւոյ, անագորոյն չորրորդապետներ: Արդէն  
«չատ եկեղեցիներ անոնց ձեռքին տակն էին. սա-  
«կայն գոհ չըլլալով մնացած եկեղեցեաց վրայ ալ  
«կը յարձրկէին, յուսալով որ կայսեր օգնու-  
«թեամբ ձեռք բերեն: Եկեղեցիներ կը կործա-  
«նեն. և աւելի սիրտ կ'առնուն՝ երբ տեսնան մեր  
«ողորմելիութիւնը և տառապանքը: Հուսկ ապա  
«սոսկալի պատերազմ կը բացուի, մեծագոյն մա-  
«սամբ ոգևորեալք էին, բայց բանակները տկարք,  
«չունէին գլխաւոր մը՝ որ Բանին Աստուծոյ և  
«Հոգւոյն սրբոյ պատերազմը մղէին»: Եւսերիոս  
իմացաւ թէ ինքը կարող չէր այն սոսկալի մրրկին  
դէմ կենալ, և թէ քիչ ատենէն Կապադովկիան  
պիտի շաղախուէր արիոսական մոլեգնութեամբ.  
դիմեց առ Նազիանզացին որ ինքը Բարսղի տեղ  
նեցուկ ըլլայ իրեն, այլ անիկայ վեհանձնու-  
թեամբ մը այս պատասխանը տուաւ Մեսերիոսին.  
«Երջանիկ կը համարիմ զիս այս պատուոյս, բայց  
«չեմ կրնար համբերել այն անիրաւութեան զոր  
«գու ըրիր և դեռ կ'ընես Բարսղի իմ եղբորս,  
«իմ առաքինութեան ճամբուն ուղեկցիս, և գի-  
«տութեանց և իմաստասիրութեան աշակերտա-  
«կըցիս: Երբոր զինքը նախատելով զիս կ'ուզես պա-  
«տուել, ուրիշ բան ըսել չէ բայց եթէ մէկ ձեռ-  
«քով փայփայել շոյել և միւսովը ապտակել. ե-  
«թէ ինձի կը հաւատաս՝ յարգէ զինքը ինչպէս որ  
«արժանի է, և գու ալ կը պատուիս. իսկ մենք  
«քու ետևէդ կու գանք՝ ինչպէս ստուերը մար-  
«մնոյ կը հետևի: Յաջողեցաւ Գրիգոր կակղցը-  
«նելու Մեսերիոսին սիրաւ, յետոյ համոզեց և  
«զԲարսեղ: Ետտ խօսից պէտք չեղաւ կ'ըսէ Գրի-  
«գոր, զինքը 'ի մեզ ձգելու: Կը վազէ Պոնտոսէն,  
«կու գայ 'ի մայրն եկեղեցեաց, կը հաշտուի, կը  
«միաբանի և կը սկսի գործել. խոչընդոտները և  
«գայթակղութիւնքը կը վերցընէ մեջտեղէն՝ յորս  
«վստահացեալ էին թշնամիք. ուղղափառաց կող-  
«մը կ'ելլէ, կը հալածէ զթշնամիս: Այսպէս մեր  
«թշնամիքը առանց գործ մը տեսնելու կորակոր  
«և ամաչեցեալ աներևութացան. այն ատեն ի-  
«մացան թէ Կապադովկեցւոց հետ խաղալ չըլ-  
«լար»: Բովանդակ հեղինակութիւնը Բարսղի  
վրայ էր. Եւսերիոս անուամբ միայն էր եպիսկո-  
պոս:

Ասոր եպիսկոպոսութեան վերջի տարիները  
Մեծն Ներսէս եկաւ բազմութեամբ նախարար-  
ներով 'ի Կեսարիա կաթողիկոս օծուելու յՄես-  
երիոսէ. հոն սքանչելեօք կ'առնոյր զկաթողիկոսու-  
թիւն Ներսէս, ներկայ էր և ինքն Երիցապետն  
Բարսեղ. և երբ դարձաւ 'ի Հայաստան՝ բարե-  
կարգել սկսաւ իր երկիրը ու ամենայն մասամբ  
չէնցընել: «Հրամայեալ ըստ գաւառաց գաւա-

« ապ շինել աղքատանոցս 'ի խորշս և 'ի զերծ  
 « տեղիս, զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց  
 « լինիցին 'ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց :  
 « Եւ բաժանեաց 'ի նոսա զաւանս և զագարակս,  
 « պաղաբերեալ յարգեանց անդաստանաց և 'ի  
 « կթից արօտականաց և 'ի գեղմանց, զի պաշտես.  
 « ցեն զնոսա հարկաւ բացէ 'ի բաց, և նոքա մի  
 « ելցեն ըստ բնակութիւն իւրեանց :... Հրամա-  
 « յեաց և յամենայն գիւղս վանս շինել, զի լինիցին  
 « օտարանոցք, և տեղի սննդեան որբոց և ծերոց և  
 « անուշողաց տաժումն : Շինէ և յանապատ և  
 « յանմարդ տեղիս եղբայրանոցս և մենաստանս և  
 « յապահանակաց խրճիթս » : Ահաւասիկ ինչ որ  
 Մեծն Բարսեղ գործեց 'ի Կապադովկիա և 'ի Կե-  
 սարիա, նոյնը ըրաւ և մեր Մեծն Ներսէս Հայա-  
 ստանի մէջ, թէ շինութեանց կողմանէ և թէ կրօ-  
 նաւորական կարգաց :

Գ

Բարսեղի կախկոպոստը իւր. — Կապադովկիոյ  
 րեւիկն երկու բաժնուիլը. — Արքիմոս և  
 պիսկոպոս Տիանայ. — Գր. Սագիմայ. —  
 Բարսեղի բարեկարգութիւնը. — Հերձուածք  
 յԱրևելս. Բարսեղի հեարագիտութիւնը և  
 յԱրևմուտս դիմելն օգնութեան համար. —  
 Ժողով յԱրևմուտս. — Բողոք Բարսեղի առ  
 Դամասոս քահանայապետ. — Բարսեղի դա-  
 տաւորաց սաղև. հարցափորձիլը. — Իր  
 մահը :

Եւսերիոսի մահուանէ ետքը ալ աւելի շփոթու-  
 թիւն ծագեցաւ 'ի Կապադովկիա յաջորդի ընա-  
 րութեան պատճառաւ. գիտէր Բարսեղ որ շատ  
 վտանգաւոր դրից մէջ պիտի լինայ քաղաքը՝ եթէ  
 եպիսկոպոսութիւնը ուրիշի մը ձեռք լինայ : Ուս-  
 աի գրեց առ Գրիգոր իր բարեկամը՝ որ փութայ  
 գայ. « վասն զի, կ'ըսէր, ծանր հիւանդութեամբ  
 մահուան դուռն եմ, եկուր վերջին բարևս տամ » :  
 Այս լուրը շատ վրդովեց Գրիգորի սիրտը, և մէ-  
 կէն ճամբայ ելաւ. բայց տեսնելով եպիսկոպոսաց  
 խուռն բազմութեամբ 'ի Կեսարիա դիմելը, իմա-  
 ցաւ թէ Եւսերիոս վախճաններ և տեղը յաջորդ  
 մը պիտի ընտրուի, և թէ Բարսեղի հիւանդութիւ-  
 նը կեղծիք է : Այն ատեն թուղթ մը յուղարկեց  
 առ Եւսերիոս սամոստացի, որ աճապարէ ժողով-  
 քին և ընտրութեան մասն ունենայ. որ և անյա-  
 պալ՝ ոչ ծերութեանը ինայելով և ոչ օգոց ցըր-  
 ատութեանը, ելաւ եկաւ 'ի Կապադովկիա : Հոն  
 կղերը և եպիսկոպոսունք, ժողովուրդ և իշխանա-  
 ւորք՝ մեծ խռովութիւն մը յարուցեր էին. ժո-  
 ղովուրդը Բարսեղի կողմն էր, բայց հզորագոյնք ա-  
 մեն քար կը շարժէին որ չըլլայ թէ Բարսեղ ընտ-  
 րուի. մերթ զուր ամբաստանութեամբք կը բամ-  
 բասէին թէ արժանի չէ, և մերթ սկար ու հիւան-  
 դոտ մարմինը կը պատճառէին : Սակայն Բարսեղ  
 ըստ եկեղեցական օրինաց երեք եպիսկոպոսօք  
 ընտրուեցաւ, և հակառակորդ եպիսկոպոսունք  
 առ ժամս քաշուեցան, ատելութեան ոխը սրտեր-  
 նին պահելով :

Բարսեղ և Գրիգոր թէպէտ իրենց կրթութիւ-  
 նը Աթէնք կատարած էին միատեղ, բայց շատ զա-  
 նազանութիւն կը նշմարուէր իրենց բարուց մէջ.  
 Բարսեղ հաստատուն, անդրդուելի ոգի մ'ունէր,  
 անոր համար բարեկամութիւնն ալ աւելի լուրջ  
 և լակեղեմնական էր. իսկ Գրիգոր ճկուն վառ-  
 վրուռն և ոգելից անձ մ'էր, հետեւաբար բարեկա-  
 մութիւնն ալ սիրուն և փափուկ, զգայուն և անձ  
 նանուէր : Եւ այս իր անձնանուէր սիրելութիւնը  
 մեծ դէպքի մը մէջ յայտնի երեցաւ. արքունի  
 հրամանաւ Կապադովկիա երկու վիճակ կամ գա-  
 ւառ բաժնուեցաւ, Կեսարիա և Տիանա (կամ  
 Քրիստոսպօլիս). ասկէ առիթ առնելով Տիանայի  
 եպիսկոպոսն Անթիմոս՝ ուղեց անկախ ըլլալ Կեսա-  
 րիոյ մետրապօլիէն՝ նաև ըստ եկեղեցական կար-  
 գաց, և Որեստիայ մենաստանին եկամուտը վայե-  
 լել : Այս բանս չէր քաշեր Բարսեղ, և կ'ուզէր որ  
 զԱնթիմոս իրմէ անկախ չթողու. ասոր համար  
 պէտք էր որ 'ի Սաղիմա իր կողմանէ եպիսկոպոս  
 մը դնէր, որպէս զի մենաստանին եկամուտը իրեն  
 հասցընէ. առաջարկեց և բռնագատեց իր սիրելի  
 բարեկամը՝ որ այս պաշտօնս յանձն առնու. այլ  
 նա յեա բազում հրաժեշտի և յանդիմանու-  
 թեանց, երբոր չկրցաւ զԲարսեղ իր գիտաւորու-  
 թենէն ետ կեցընել՝ յանձն առաւ երթալ այն  
 քաղաքը, զոր ինքնին այսպէս կը ստորագրէ. « Կա-  
 « պադովկիոյ մեծ և արքունի ճամբուն վրայ,  
 « փոքրիկ մարդ մի է, երեք փողոց բաժնուած.  
 « տխուր ու նեղ աւան մը, անջրգի, անգալարի,  
 « ազատ մարդու անարժան տեղ : Փոշոտ, շարու-  
 « նակ կառաց շառաք, միշտ հեծութիւնք և  
 « ողբք, հարկահանք, տանջանք և կապանք, օ-  
 « տար և պանդուխտ ժողովուրդ մը. այս է բո-  
 « վանդակ Սաղիմը » : Գրիգոր իր սիրելւոյն զինքը  
 կը զոհէ և կը փակուի այն անշէն քաղաքիկը : Իսկ  
 Բարսեղ իր եպիսկոպոսական աթոռէն կը սկսի  
 տարժանելի աշխատութիւնքը. յամին 372 կ'եր-  
 թայ խաղաղելու զՓոքր Հայս, և յ 375 երբոր ա-  
 րիանոսեանք հինաբար յարձակէին տիրելու Նի-  
 կոպոլսեայ, ինքը կանխեց հոն փոխադրեց Կողո-  
 նիոյ եպիսկոպոսը զԵւփրոնիսս. այս գործս թէ-  
 պէտ կանոնաց գէմ էր, սակայն այնպիսի գժուա-  
 րուա ժամանակին օրինաւորեցուց ինքն Բարսեղ :  
 Գարձեալ եպիսկոպոսաց ընտրութեան խնդիրն  
 ալ կարգի դրաւ. մինչև յայնժամ աշխարհական  
 զօրութիւնն ալ մասն ունենալով եպիսկոպոսաց  
 ընտրութեան մէջ՝ շատ անկարգութեանց և խռո-  
 վութեանց առիթ կ'ըլլային, ինքը սանձահարեց և  
 ապահովեց եկեղեցականաց իշխանութիւնը :  
 Բայց կը մնար մեծագոյն և ամենահարկաւոր  
 կէտ մը՝ զոր պէտք էր անհրաժեշտ ուղղել : Կա-  
 պադովկիա հերձուածոց և հերեսիովտաց բոյն  
 դարձեր էր. արիոսեանք, սաբելեանք և մակեդո-  
 նեանք գրաւած էին զբոլոր երկիրն, և օր ըստ օր է  
 եկեղեցեաց տիրելու վրայ էին. փոքր Ասիա Եւ-  
 նոմեանց կամ Անոմեանց գերի մասնուած էր,  
 Ասորոց մասն ալ Ապողինարեանց : Զասոնք շա-  
 հիլը գրեթէ անկարելի էր. բայց Բարսեղ ջանա-  
 լով որ իր երկու բարեկամները՝ Ատարբիոս Նէո-  
 կեսարիոյ և Եւստատիոս սեբաստացին շահի,  
 զինքն ալ վտանգի մէջ դրաւ, և մինչև ձայն ալ  
 ելաւ թէ Բարսեղ սնունց համախոհ և համամիտ  
 է. բայց ինչ օգուտ սյուշափ զիջանէն, երբոր եր-

կուրն ալ կորսնցուց. և յուսահատած ժողովեց զեպիսկոպոսունս թուով 32, և միախոհ հաւանութեամբ գրեցին յարեմուտս օգնութիւն խրնդրելու. նախ առ Աթանաս յ 371. « Համողումս « եմ որ եկեղեցւոյ նպաստելու միակ միջոցն է « արեմտեան եպիսկոպոսաց հետ միանալը և միա- « բանիլը. թէ որ նոյն նախանձը ցուցնեն՝ ինչ որ « ըրին իրենց քանի մը հերեաթիկոսաց դէմ, ան- « շուշտ հասարակաց վտանգին օգուտ մը կրնանք « ընել: Այսպէս պէտք է որ յարգէ այսչափ եպիս- « կոպոսաց կարծիքը և հեղինակութիւնը, և ան- « տարակոյս եմ որ ժողովուրդն ալ դէմ չի կե- « նար »: Այս թղթովս Բարսեղ կը յորդորէր զա- թեմտեան եպիսկոպոսունս որ միաբան ժողովով մաքրէն եկեղեցւոյ այս խանդարմունքը, բայց ա- թեմուտք չարժեցաւ այս խնդրոյս. միայն Ս. Ամբրոսիոսի ազաչանօքը Լիւրիկէի ժողովքը գումարեցաւ, և երէք կայսերաց՝ Վաղենտինոսի, Վաղեսի և Գրատինոսի վճռովը հրաման հասաւ յարեւելս չհալածելու զուղղափառս. բայց քիչ ատե- նէն Վաղենտինոս վախճանելով՝ Վաղէս իր առջի ճամբան բռնեց, և հրովարտակէն անօգուտ եղան յԱրեւելս:

Հեռեկալ տարին (372) նամակ մ'ալ կ'ուղղէ Բարսեղ ՚ի Հուովմ, յորում կը խնդրէր արիտ- սեանց, Եւստատիոս, Ապոլինարի և Պաւլինայ անտիօքացւոյ դատապարտութիւնը. բայց պա- տասխանուցն մէջ, Բամասոս և Պետրոս աղք- սանգրացի՝ արիանոսաց կարգը կը դնէին զԵւսե- բիոս սամոստացի և զՄելիտոս անտիօքացի, որք նոյն ժամանակը կը հալածէին յարիանոսաց:

Այսպէս կնձաւից դիպաց մէջ կը հիւժէր կը մաշէր Բարսեղ դրեթէ անօգուտ տեղ. ոչ միայն անօգնական մնաց յամենուտս, այլ և Վաղէս մրմուռով մտեր էր ՚ի Կապադովկիա, և աչքը ՚ի Բարսեղ էր որ կամ սպառնալեօք կամ տանջա- նօք յինքն ձգէ. բայց անպարտելի ասոյեանն հա- ւատոյ, որ այնչափ գունդագունդ հերեսիովտաց դէմ ամբարտակ մը կանդնուեր էր, յաղթահա- րեց իր պերճախօս աստուածազգեցիկ բարբառովը թէ զգատաւորս և թէ ինքնին զՎաղէս: Գեղեցիկ է լսել այն ճոռումբան լեզուն որ արձանացեալ դատաւորին առջև կը հիացնէ բոլոր հանգիպա- կացքը. « Բարսեղ, կ'ըսէ դատաւորն, ուստի ստա- « ցեր ես այս յանդգնութիւնդ՝ մեծ իշխանու- « թեան մը գիմաց. ինչ է քու այդ խորխտու- « թիւնդ: — Ինչ կ'ըսես, ո՞րն է իմ յանդգնու- « թիւնս: — Այն է՝ որ կայսեր կրօնքէն չես, մինչ- « գեռ ամենքը կը հնազանդին և կը խոնարհին: — « Զեմ կրնար արարած մը պաշտել, երբ ես ինքն « արարած եմ Աստուծոյ, և աստուածանալու « ալ հրաման ունիմ: — Զմեզ ինչ կը կարծես: — « Ոչինչ, երբոր այսպիսի պատուէրներ կու տաք « մեզի: — Ուրեմն զմեզ քեզի հաղորդակից չես « համարիր: — Իո՞ւք քաղաքապետ էք, բայց ոչ « աստուած, այնպէս զձեզ մասնակից կը համա- « րիմ, ինչպէս և զայլս. վասն զի քրիստոնէու- « թեան կնիքը հաւատքն է, և ոչ թէ իշխանու- « թիւնք և պատիւք »: Այս անվախ զրուցա- տրութենէ ապշեալ դատաւորն՝ զարմացմամբ կը պատմէ Վաղեսի: Անձամբ հասաւ Վաղէս ՚ի Կե- սարիա և Աստուածայայանութեան օրը եկեղեցին մանելով, « Երբոր սաղմոսերգութեան ձայները

« որոտման նման ականջքը դռնէցին, երբոր տե- « սաւ խուռներամ ժողովուրդը, սեղանոյն և սրը- « բութեան հրեշտակային պաճուճանքը, և զարք- « եպիսկոպոսն՝ անշարժ մարմնով և աչքերով, « և սեան պէս ուղղաբերձ առաջի Աստուծոյ, « ապշեալ ընդարմացաւ »: Քիչ տեւեց այս զգա- ցումն ՚ի Վաղէս, և միւսանգամ յարիանոսաց դրդեալ ստորագրեց Բարսղի սքսորանաց վճիռը. « Գիշերը կը հասնէր, կ'ըսէ Նազիանզացին, կա- « քը պատրաստ կը սպասէր. թշնամիք ծափահա- « րութեան մէջ էին, հաւատացեալք ՚ի յուսա- « հատութեան. արիասիրտ ուղևորին չորս դին « բռնած էինք: Բայց ինչ կը տեսնես. Աստուած « հրովարտակը կը պատուէ. այն որ Եգիպտացւոց « անգրանիկները սպառեց, յանկարծակի հիւան- « դութեամբ մը զարկաւ կայսեր որդին. ջերմ « մը կայսեր խեղքը գլուխը բերաւ »: Բարսղի ոտքը կը վազէ, կը կանչէ իր արքունիքը. « կը « վազէ Բարսեղ. հիւանդը քիչ մը կը զօրանայ, « հօրը յոյսը կ'ամրանայ. և եթէ քաղցր ջրոյ մէջ « աղի ջուր չխառնէր (այն ատեն կանչելով զսուր- « բը՝ երբ հերեաթիկոսաց վրայ վստահած էր), որ- « գին կ'ոյջըննար և կ'առողջանար »:

Իսկ մեր ամենայնաղթ վկայն Բարսեղ՝ միայն մահուան բռնութենէ չկրցաւ ազատել, որ չու- շացաւ փրկելու զինքը բազմագիմի մաքառմունք- ներէ և հոգերէ. « Երբոր մեռաւ, կ'ըսէ Գաղղիա- « ցի երևելի քննադատն, գաւառին բոլոր ժողո- « վուրդը զիմեց իրեն յուղարկաւորութեանը: « Հեթանոսք և Հրեայք մի քան զմի վշտագնեալ « արտասուէին զնա, որովհետեւ ամենուն բարե- « րարն էր »: Նոյն օրուրնէ մեկէն խորանաց վրայ կ'ելլէ Բարսղի յիշատակը, և Սաբա անունը կը հնչեն եկեղեցեաց որմերը. ներբողաբանքն կ'ար- ձանանան, և Նազիանզացին աւելի սրտաշարժ ներբողաբանն այսպէս կը հիւսէ իր պանծալի գրուագը. « Ժողովեցարուք առ իս ամենեքեան, « սիրելիք Բարսղի, պաշտօնեայք սեղանոյն, սպա- « սաւորք տաճարին, որ ՚ի քաղաքիս և որ եկեղ- « էք. լերուք ինձ նպաստ յօրինել զգրուատիս « նորա. իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ պատմեցէք զմի « մի յառաքինութեանց նորա, առեալ յօրինակ « զկարգս վարուց նորա: Աշխարեցէք ամենեքին, « մեծամեծք, ընդ օրէնսգիրն ձեր, ժողովուրդ՝ ընդ « հովիւդ, ընդ վարդապետն՝ իմաստունքդ, ընդ « նեցուկդ առաքինութեան ձերոյ՝ հարսունք- « միամիտքդ՝ ընդ առաջնորդն, ընդ վայրաբնինք՝ « ընդ լուսաւորն. բարեբախտիկքդ՝ ընդ արգա- « րագատն, չուառականք՝ ընդ միսթարիչն, մե- « ծատունք՝ ընդ առատն յողորմածութեան. զա- « պաւէնն ալեաց, զսանձահարիչն մանկութեան, « զբարեգործն տառապելոց: Ինձ այսպէս թուի « եթէ այրիք զնպաստամատոյցն իւրեանց հըռ- « չակ հարցեն, և տնանիք՝ զաղքատասէրն. և ա- « մենեքին, զի զամենայն ասացից, զայն՝ որ լինէր « ամենայն ընդ ամենայնի, զի զամենայն շահեսցի: « Ընկալ զմեծարանս բարբառոյ սիրելւոյն քեզ « հասակակցի և զհանգիստապատուին: Եթէ խուռն « ինչ մերձենալ յարժանիս քոյ կարողացայց, նա « և այն շնորհ առ ՚ի քէն է. զի յօգնականութիւն « քո ապաստան՝ զայսմ գրուատեաց բուռն հա- « րի: Զի թէ երբէք և յեռնեալ ուրեք գտանի- « ցիմ՝ զինչ ինչ առաւել հնար էր ինձ ՚ի տառա-

« պանս աստ յայսմիկ՝ ուր ընկեցին զիս ալևոյթ,  
« տկարութիւնք և սուգ անջատման քո յինէն:  
« Այլ հաճի՛ Տէր ընդ նա՝ որ իւրովսանն ըստ զօ-  
« բուծեան գործեսցէ: Եւ դու հայեաց ՚ի բար-  
« ձանց, ոգիդ սուրբ և երանեալ »:

Դ

Սոչրբն Բարսեղ Պերճախօս և Բեմասաց . —  
Նամակակնիկ . — Վեցօրեից ձառք . — Ու-  
րիշ զանազան գրուածքք . — Պատարագա-  
մատոյց . — Այս գրուածոց շատիկն հայկա-  
կան քարգմանոտրիւնքն և ակունց արժեքն:

Յայսվայր տեսանք համառօտիւ Բարսղի կենաց  
ընթացքը, ունինք առջևնիս նոր և ընդարձակա-  
գոյն ասպարէզ մը, իրեն գրաւոր և հանձարոյ եր-  
կասիրութիւնքը: Եթէ ընդհանուր աչք մը ձգե-  
լու ըլլանք չորրորդ դարու մատենագրութեան  
վրայ, կարծես թէ յունական ճաշակն դիակնա-  
ցեալ մեռելանման յառնելու յոյս ալ չերևար-  
արդէն ասիական ճապաղութիւնք ողողեր էին  
զԱտտիկէ, և աթենացի կամ աթենավարժ հռե-  
տորքն պոռոտախօս պարբերութեամբք շառաչե-  
լով՝ անանձրե ամպերու պէս ՚ի հողմոյ շարժեալ  
ցիրուցան կ'ըլլային: Ո՛ւր էին կտրուկ, համառօ-  
տախօս Թուկիդիտէսն, իմաստազեղ և իմաստա-  
խնդիր Իսոկրատէսն, խորիմաստ և հնարագիւտ  
հանձարն Պլատոնի: Ասոնց տեղ կը տեսնուին Հի-  
մերոս, Լիբանիոս և ուրիշ անհամար հետեակ  
հանձարներ, որոնք դարուն խանգարմանը շարու-  
նակողք էին: Մաթակ, Աղեքսանդրիա, Անտիօք,  
Բիւզանդիոն և Աթէնք իրենց բազմաշառաչ համ-  
բաւոյն հանդերձ չէին կրնար մատենագրական  
անկման առջևն առնուլ: Բայց քան զանոնք ճար-  
տարագոյն գանուեցաւ եկեղեցին՝ Քրիստոսի, որ  
յանկարծ տեսաւ ՚ի բեմս քրիստոնեայ Իսոկ-  
րատէսներ և Պլատոններ. հեթանոսական ճոխու-  
թիւնքն Աստուծոյ տապանակին զարդեր եղան,  
այնպիսի մեծահանձար ճարտարապետներու ձեռ-  
քով, Աթանասայ, Բարսղի, Նիւսացւոյն, Նա-  
զիանզացւոյն և Ոսկեբերանին: Բայց գերագոյն  
քան զայլս փայլեցաւ Բարսղի հանձարը, որ իր  
դարուն պակտութիւններէն գրեթէ բոլորովին ա-  
զատ, լակոնական վսեմութեամբը կը գերազանցէ  
՚ի Հարս եկեղեցւոյ. թէպէտ և չունի Ոսկեբերանի  
բազմամանուած խաղուն գրիչը, ոչ Նազիանզա-  
ցւոյն բանաստեղծական թռիչք և ոչ սրբոյն Սփրե-  
մի ճարտարահնար գիւտերը: Բարսեղ ՚ի բնէ Ի-  
մաստասէր և Պերճախօս՝ գիտցաւ չափով բարե-  
խառնել քերթողական աշխոյժքը այն կրկին բնա-  
ձիր յատկութեանցը հետ: Իր առաջին երկասի-  
բութիւնը քերթողական յիշատակներով լեցուն  
է. յորում կը ցուցնէ թէ ինչ օգուտ կրնան քա-  
ղել պատանիք հեթանոս գրեանց ընթերցմանէն.  
Բայց ըստ փաստից կ'երևայ թէ ուրիշ նպատակ  
մ'ալ ունեցած. պիտի ըլլայ Բարսեղ, այս ինքն  
պաշտպանել զքրիստոնեայս ՚ի հեթանոսաց և գրչ-  
խաւորապէս Յուլիանոսէն. որք կը մեղադրէին թէ  
ինչու քրիստոնեայք արտաքին մատենագրաց ըն-  
թերցման ետեւէ կ'իյնան: Նատ հզօր փաստերու

չի կարօտիր Բարսեղ զանոնք ջրելու. բաւական  
են իրեն համար Մովսէս և Իսահիէլ՝ որ յԵգիպ-  
տոս և ՚ի Քաղդէաստան կատարելով իրենց գի-  
տութեանց ասպարէզը՝ աստուածընտիր մարգա-  
րէք կը զրկուին Աստուծոյ ժողովրդեան: Բարսեղ  
իրեն ժամանակը թերևս ասկէ աւելի օրինակ մը  
չունէր առջևը՝ զինքը և զիւրսն պաշտպանելու,  
սակայն այսօրուան օրս անթիւ են օրինակք այն-  
պիսի դերահանձար սուրբ հարց՝ որոնք յեա ար-  
տաքին լիակատար ուսմանց՝ վայելչապէս զաս-  
տուածայինն ալ վրան կը զգենուին. և անով էր որ  
Աթանաս մը միայն անպարտելի արձանացեր էր  
արիոսեան խարխուլ և դեղեւուն իմաստասիրու-  
թեան դէմ, և այսօր ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ  
կը քարոզի յարևելս և յարևմուտս. ասով Բար-  
սեղ և Քրիզոստեանք մաքառեցան ընդ երկար սա-  
բելեան և մակեդոնեան աղանդոց դէմ, և պաշտ-  
պան եղան Ենթակայութեան խնդրոյն. վերջապէս  
ասով ծաղկեցաւ և անմահացաւ յունական Եկե-  
ղեցին և բովանդակ արևելեանն:

Բարսղի երկասիրութեանց և իր ժամանակի  
պատմութեան մասնաւոր դիպաց լոյս տուող  
գրութեանց մեծ մաս մը՝ Նամակաց մէջ պարու-  
նակած է. այն սիրելիական հաղորդութեանց կապը՝  
որով իր սիրելիքը կը մխիթարէր, կը սփոփէր, և  
որոնք քաղաքական պատմութիւնն ալ կը հիւսեն  
մեզի ընտանի և սրտակից խօսակցութեանց մէջ.  
և իրաւամբ կրնանք ըսել, (ինչպէս նաև Աիկերոնի  
նամակաց համար շատ անգամ ըսուած է) թէ ի-  
րեն նամակքն ոչ միայն մատենագրութեան օրի-  
նակք են, այլ և համբարանոց մը իր դարուն ար-  
տաքին և եկեղեցական պատմութեանց:

Բայց Բարսղի հրաշակերտքն են Վէյցօրեի Ինն  
ճառքն և Հայեայ ՚ի չեղ շնաշխարհիկ իմաստասի-  
բութիւնը քրիստոնէութեամբ պսակեալ: Վէյց-  
օրեից մէջ գիտութեանց հեղեղ մ'է Բարսեղ, մերթ  
բուսաբան մերթ կենդանաբան, երբեմն բնախօս  
և երբեմն բնազանց իմաստասէր, սակայն միշտ օ-  
ծեալ սրբազան գրիչ մը: Իրեն բուսաբանական գի-  
տողութիւնքն չեն այնպէս անպաճոյճ և պատմա-  
կան իրրե զՅրոգոտեայն և ոչ իրրե զՍղիանոսին.  
Իրեն շարժուն երևակայութիւնը չի կենար մէկ կէ-  
տի վրայ, այլ « Յայսմանէ զոր այժմս տեսանեմք, ՚ի  
« կարգեցելոյ բուսոցն՝ որ բուսանին, վկայու-  
« թիւնս ունիմք այնց՝ որ իսկզբանէն հաստատե-  
« ցան: Չի ինչ որ ՚ի յերկրէ ելանէ, նախ բոյս արձա-  
« կի, ապա դալարի լինի, և յետոյ գայ լինի խոտ  
« կատարեալ »: Ետքը կը սկսի մանրամասն նկարել  
սերմանց հողուն մէջ և անկէ դուրս կրած փոփո-  
խութիւնքը, մինչև հրնտի պատրաստութիւնն.  
« Յորժամ և անկանիցի սերմն յերկիր, և անգ  
« հով և ջերմութիւն հասարակակիւ գտանիցի,  
« սկսանի այսուհետև թուլանալ պատառիլ, խիզբս  
« արկանել, վակժոյժ լինել զերկրէն յօր եգաւ,  
« գգեռեալ ձգել զնա առ իւր: Եւ սկսանի այսու-  
« հետև ՚ի վերին կողմն ուղղել և ՚ի խոնարհ գնալ-  
« զի զբոյսս ՚ի վեր երևեցուցէ, և զարմատն ՚ի  
« ներքս պնդեսցէ. և ըստ թուոյ արմատոցն որ ՚ի  
« խոնարհ արձակին, նոյնպէս երևեցուցէ ՚ի վեր  
« և զջով բուսոյն տայ: Խոնաւութեամբ սնանի  
« հիւթով երկրին, որ է նորա կենդանութիւնն,  
« մերձաւորութեամբ ջերմութեան հաւասարա-  
« կիւ չափով. և ապա բաժանի ՚ի ցօղն և ՚ի պա-



ԱՇԽԱՐՀԱՀԱՆԳԻՍ ՎԻԷՆԱՅ

- 1 և 2. Պարս ճարտարութեան.
- 3. Անգատակ մերենայից.
- 4. Հանգիսարան արուեստից.
- 5. Հանգիսարան արուեստասիրաց.
- 6. Տեղի բուսոց և տնկոց.
- 7. Զբարան (Չինաւազան).

- 8. Գլխաւոր ուղի Բրազերի.
- 9. Գլխաւոր մուտք.
- 10. Գոմբ (Փակարան).
- 11. Գլխաւոր մուտք ճարտարութեան սլաւտան.
- 12. Յարկ Յանձնաժողովոյ.
- 13. Նամակատուն և Հեռագրատուն.

- 14. Յարկ Ինքնակալին.
- 15. Յարկ Գատաւորաց.
- 16. Սրահք հաղորդակցութեան.
- 17. Բրազերի հրարուեստական ճամբան.
- 18. Հաղորդակցութեան ճամբաներ.
- 19. Կողմնակի մուտք ճարտարութեան սլաւտան.

- 20. Հաղորդակցութեան ուրիշ սրահներ.
- 21. Բակ ձեռակերտաց.
- 22. Տեղի վերանորոգութեանց.
- 23. Երկաթուղի Հիւսիսակողման.
- 24. Երկաթուղի Պետական.
- 25. Կենդրոնական կայարան.

- 26. Գանուբ գետ.
- 27. Ակիզքն Գանուբ գետոյ.
- 28. Սայլ անուն կայարան.
- 29. Կայանք կառաց.
- 30. Հանգիսարան երկրագործական.

« աիճ, և 'ի գոգաձև փոճոկս, և 'ի հատ և 'ի  
 « քիտտ: Եւ այսպէս 'ի սակաւ բուսոյն 'ի կատա-  
 « րեալ չափ սերման գան ամենայն սերմանիք...:  
 « Եւ արգ երկոքեան իրքն, նախարուի բոյսն և  
 « յետոյ պատկան սերմանեաց առ հասարակ ըս-  
 « քանչացուցանեն, յորժամ միտ եգեալ մեղմով  
 « նայեսցիս: Այլ ունիս զարմանալ ընդ ցօղն ցորե-  
 « նոյն, թէ զիարդ պնդեալ հաստատեալ վերանայ  
 « ծնկակապ կապօքն. զի հաստակապ հանդուցիւքն  
 « զօրասցի ժուժկալեսցի առ 'ի բառնալ զժանրու-  
 « թիւն հասկացն, որ պատկանին 'ի գլուխն, զի  
 « մի 'ի ծանրութենէ հասկոյն զոր ունիցի 'ի գը-  
 « լուխն՝ զլխարկեալ գտանիցի ծանրաբեկ 'ի յեր-  
 « կիր անկեալ: Իսկ ցօղն վարսակոյ ամենեկին փոր  
 « և սնամէջ է, քանզի չիք ծանրութիւն 'ի գլուխ  
 « նորա. իսկ ցօղ ցորենոյն ծնկակապ կապօք հան-  
 « գոյց առ հանգոյց հաստատեաց. դարձեալ հա-  
 « տոյն փոճոկս գոգաձև կազմեաց 'ի հասկին,  
 « և շուրջ պատեալ ամրացոյց քստով՝ իբրև ամ-  
 « րածածուկ պատնիշօք, զի մի լիցի դիւրին սեր-  
 « մանաքազ թռչնոց առնուլ ինչ 'ի նմանէ և մնաս  
 « առնել »:

Աստուածային ակնարկումն միայն բաւական է  
 զերկիր յոչէից յեռութիւն բերել. և երբ արիական  
 հրամանը կ'ազգի անկերպարաննիւթոյն՝ « Մարգբ  
 « ըստ իւրաքանչիւր վայելութեան ազգի ազգի  
 « խոտովք և պէսպէս ծաղկովք, և հովիտք և  
 « ձորք երկրի առհասարակ կանանչացեալք դա-  
 « լարով գնդէին: Եւ դաշտք ամենայն ազգի ազ-  
 « գի սերմամբ զարգարեալ զուարճանային. նը-  
 « կարեալ ունէին յանձինս իւրեանց զնշանակ ա-  
 « լեաց ծովուն 'ի ժամանակի քաղցրաշունչ օդոցն՝  
 « որ ձօճեալ ճեմեցուցանեն զվէտս վէտս ալեացն,  
 « որ աշտիճանիցին 'ի ջուրցն ծիծաղելոյ: Եւ ամե-  
 « նայն արմատք և բոյսք և ազգի ազգի խոտ ծաղ-  
 « կեալք գունակ գունակ սերմամբք զուարճա-  
 « ցեալք երևէին միանգամայն 'ի վերայ երեսաց  
 « երկրի:..... Եւ տեսցուք որչափ ազգ իցեն  
 « ծառոց, և բխեցին լինել յաշխարհէ. կէսքն սլա-  
 « զարբք, կէսքն անպտուղ 'ի գործ փայտեղէն ա-  
 « նօթոյ, և յայրուսն հրոյ 'ի պէտս պաշտաման  
 « մերոյ: Բազմադիմիք, բիւրազգիք, որ միմեանց  
 « ինչ ոչ նմանեն, զոր մեք մերով տկարութեամբս  
 « չեմք բաւական գիտել և ընտրել մի ըստ միողէ զա-  
 « մենեսեան: Քանզի կէսք 'ի ծառոց խորարմատք  
 « են և տարածատակք, և կէսքն սողկագնացք նօս-  
 « րաբոյսք են. և կէսքն միաճեալիք յատակարուիք,  
 « և կէսքն բազմատք խոտոստեայք. և կէսքն դեա-  
 « նատարածք, զի ըստ շաքլել արմատոցն 'ի ներ-  
 « քրս՝ նոյնպէս և գեանատարած ոստքն յամե-  
 « նայն կողմանս առ երկրու տարածանին: Նայես  
 « ցուք դարձեալ և 'ի կեղևս ծառոցն. զիարդ ոչ  
 « նմանեն միմեանց. զի կէսքն ուղորկակեղևք են,  
 « և կէսքն զկերպարանս քոսոց ունին խոժոռն խո-  
 « շորութեամբ, կէսքն միակեղևք և կէսքն խաւ 'ի  
 « խաւոյք, կէսքն թանձրոյք և կէսքն անօս-  
 « բուիք »: Այսպէս բնութեան ամենայն մասունը  
 « քնն գեղեցիկ դրուագներ կը կազմեն պերճախօ-  
 « սին գրչին տակ. արմաւենեաց և թղենեաց ամուս-  
 « նութիւնքն շատ աւելի կենդանագրեալ են 'ի վեց-  
 « օրեայն քան յերոգոտոսն: Շատ տեղ կրնայ նա-  
 « և բազմատուիլ Բարսեղ՝ Արիստոտէլի, Թէո-  
 « փրաստեայ և Ալուատարքեայ հետ, կենդանեաց

ամենաճիշտ յատկութեանցը և նկարագրութեանցը  
 մէջ:

Քաղով բնախօսական գիտութեանց, ստեպ կը  
 ջանայ Բարսեղ ինքզինքը պատրուակել, շուրջը  
 ժողովուրդը և հասարակաց քրիստոնէից կար-  
 ծեաց նախապաշարմունքը ընդոստուցանել, և ի-  
 մաստասիրաց կողմը զինքը ցուցնել: Ինքը հա-  
 մազեալ էր թէ աշխարհիս գիտութեանց հրաշա-  
 կերաքը՝ իր հելլենացի ազգայնոց գրուածոցը մէջ  
 ըստ բաւականին ամբարեալ են, սակայն չէր հա-  
 մարձակեր յայտնապէս խոստովանելու, երբ ա-  
 րիոսեսանք կ'ամբաստանէին զինքը թէ Օրփոսի գի-  
 րութիւն կը մացընէ յԱկեղեցին: Այս արտաքին  
 գիտութեանց աւարամասով կը զարգարէ իր եր-  
 կասիրութիւնքը, որոց բովանդակ ոգին և ջիւնն  
 է նոյն իսկ քրիստոնէական իմաստասիրութիւնը:  
 Այն շնորհալի, վսեմ և խորին իմաստները՝ զոր  
 հեթանոսք առանց որոշակի ըմբռնելու իրենց  
 գրուածոցը մէջ կը ցանկին, գեղեցիկ և առողա-  
 ցեալ հունձքեր են սուրբ հարց գրչին տակ. Առկ-  
 րատայ առածն « Մանիր զքեզ » (γνώμι σεαυτόν)  
 հեթանոսութեան մէջ ընկրդմած անծանօթ մնա-  
 ցեր էր. ո՞վ կրնար լուծումն տալ ասոր թէ ինչպէս  
 մարդս կրնայ ինքզինքը ճանչնալ՝ բայց եթէ Քրիս-  
 տոնէութիւնն. « Հայեաց 'ի քեզ. այս է, մի քոյոյդ  
 « և մի որ զքեզ է, այլ 'ի քեզ միայն հայեաց.  
 « քանզի այլ եմք մեք, և այլ է մերն, և այլ որ  
 « զմեւքն: Մեք եմք անձն և միտք, որով ըստ  
 « կերպարանի արարողին եղեալք, մեր է մարմինս  
 « և սորին զգայութիւնս. իսկ զմեւք՝ ինչք և ա-  
 « թուեստք և այլ կենցաղոյս պատրաստութիւնք:  
 « Արդ զինչ է բանս. մի մարմնոյն միայն հայիցիս.  
 « և մի սորայն բարւոյն ամենայն իրօք զհետ եր-  
 « թիցես, առողջութեան և գեղեցկութեան և հեշտ  
 « ցանկութեանցն և երկայնակեցութեան. և մի  
 « ընդ ինչս զարմասցիս և ընդ փառս և ընդ զօրու-  
 « թիւնս:... Քննեա զքեզ զինչ էս. ծանիր զքո  
 « բնութիւնդ, զի մահկանացու է մարմինդ և ան-  
 « մահ անձնդ. և զի կրկին իմն են մեր կեանքս, մի՞  
 « ըստ ընտանի մարմնոյս արագ անցանէ, իսկ ազ-  
 « դակցի հոգւոյս ոչ ունի զբովանդակութիւնն:  
 « Արդ հայեաց 'ի քեզ. մի 'ի մահկանացուիդ որ-  
 « պէս 'ի յաւիտենականի մնացես, և մի զյաւի-  
 « տենականի իբրև զանցաւոր արհամարհիցես.  
 « անաես արա զմարմինդ՝ քանզի անցանէ. ինա-  
 « մեա զոգւոյդ իրս՝ զանմահականս: Եւ վասն զի  
 « ցանկայ մարմին ընդգէմ հոգւոյ, և հոգի ընդ-  
 « գէմ մարմնոյ, սոքա միմեանց հակառակ են.  
 « տես, մի երբեք առգնելով մարմնոյ, բազում զօ-  
 « թութիւնս տայցես վատթարին. քանզի որպէս 'ի  
 « մէտս կչուցն՝ եթէ զմին ծանրացուցանես՝ ծանրն  
 « թեթեւոյն ամենայն իրօք զընդդիմակացն առ-  
 « նէ. սոյնպէս 'ի վերայ մարմնոյ և անձին, միոյն  
 « առաւելութիւն՝ հարկաւորապէս առնէ նաւա-  
 « զութիւն միւսումն: Վասն զի մարմնոյ բարեկե-  
 « ցելոյ և բազմամրսութեամբ ծանրացելոյ, 'ի  
 « հարկէ տկար և անզօր լինի առ 'ի յընտանի ներ-  
 « գործութիւնս՝ միտքն. իսկ հոգիդ քաջօղջու-  
 « թեամբ և 'ի ձեռն բարեացն հրահանգից առ 'ի  
 « յիւրն մեծութիւն բարձրացեալ, կարգաւորա-  
 « բարձր մարմնոյս ունակութիւնք թառամին »:

Բարսեղ երբ կեսարիոյ բեմերէն կը հնչեցնէր  
 այն լեզուածայր ողորկավանկ պերճախօսութիւ-

նը՝ արուեստաւորք և գործաւորք խառն ընդ մեծատունս կը գիմէին յունկնորութիւնս. անոնց առջև կը գնէր աշխարհիս սակաւակեաց աւուրքը՝ որ խոտոյ նման կ'անցնին կը թառամին և երազի պէս կը թռչին « Այսօր՝ առողջ մարմնով, գու՛ « նեան գունով, կայտառ 'ի վեր քան զարբունս « հասակին, գրգեալ գրգանօք, կայտառ և փափ- « կասուն և անսանձ. և վաղիւ՝ հասեալ 'ի թշուա- « ռութիւն, անկանի 'ի կենաց, ծնկի ծիւրի, հի- « ւանդութեամբ ջերանի: Նայեաց գարձեալ « ընդ միւս ևս որ սմին նման է. մեծատուն ընչա- « շատ, ամբոխ սուտակասպասից շուրջ զնովաւ, « շուրջանակի բարեկամք ակնառութիւնս կատա- « րեն, բազում ազգատոհմք և թարաթոք ջրն « թողք. և խաղացեալ երթան զհետ նորա բազ- « մամբոխք ժողովուրդք մարդկան, կէսք մատա- « կարարք, և բազումք անդէն շուրջ զնովաւ նմին « սպասիկք, և ամենեկին նախանձելի է ամենե- « ցուն՝ որ սլատահին նմա: Յաւել գարձեալ 'ի « վերայ այսր մեծութեան՝ զիշխանութիւնն քա- « ղաքական, և զպատիւս արքունականս, լինել « զօրագլուխ զօրաց, հրամանատար ազգաց: Քա- « ռոզն առաջի ազաղակէ, որոտայ, հնչէ. աստի « անտի նուիրակք նկարեալ ունին յաչս և յերեսս « զաս և զերկիւղ սպառնալեաց, արկանել շտապ « տագնապի ամենայն ամբոխին. անդ են տեսիլք « ասագինք, գրաւումն ընչից, գերութիւն, կա- « սանք շղթայից. և ժողովք աամիկ մարդկան « սրտաթափ սրտաբախ լինին յահէն և յերկիւ- « ղէն: Եւ այլ զի՛նչ ևս. յետ այսր ամենայնի « գայցէ հասանիցէ 'ի վերայ ջերմ և տենտ տա- « պախառն, կամ կողացաւ կամ թոքացաւ յան- « կարծ 'ի միում գիշերի, և յափշտակեալ վաա- « րեսցէ զնա 'ի միջոյ մարդկանէ և զքնակութիւն « նորա մերկացի. և այն ամենայն մեծասպաս « փառաւորութիւնքն իբրև զերազ թռանին »: « Ի՛նչպէս միսթարական սփոփութիւնք էին տա- « ռապելոց վշտացեալ սրտերուն՝ երբ կ'իմանային և « կը զգային թէ հանդերձեալ երջանկութեան մը « զիրենք սրտարաստեն. չկայ թագաւոր և ոչ իշխա- « նաւոր 'ի հող երկրին. ամենքը հաւասար, մանա- « ւանդ թէ երջանիկ աղքատը՝ որ զուարթամիտ « յուսով կը համբուրէ իր մայրը՝ զերկիր, վերա- « ծնանելու յերկնային աշխարհին: « Հայեաց 'ի քեզ, « գարձեալ կը կրկնէ վերջին միսթարանքն, զի « մահկանացու ես. վասն զի հող ես և 'ի հող եր- « թիցես. շուրջ հայեա յայնոսիկ և որ յառաջ « քան զքեզ յիւրեանց անպարհաւաճութեանն « քննեցան. ո՛ւր՝ որ զքաղաքական զօրութիւնն « էին զգեցեալ, ո՛ւր գժուարակալու ճարտասան- « քըն, ո՛ւր որք զկացուրդսն կարգեցին. պայծառ « ձիաբոյժքն, զօրավարքն, իշխանքն, գոռոզքն: Ո՛չ « ամենայն փոշի. ո՛չ ամենայն առասպելք. ո՛չ 'ի « գուզնաքեայ ոսկերս՝ յիշատակ կենաց իւրեանց: « Յառեացիս 'ի գերեզմանսն, և թէ կարասցես որո- « շել՝ ո՞վ է ծառայն և ո՞վ տէրն, ո՞ աղքատն և ո՞ « ընչեղն: Չատո՛, եթէ քո իցէ զօրութիւն՝ զկա- « պանաւորն 'ի թագաւորէն, զքաջավայելուչն 'ի « գժուարատեսակէն, զզօրաւորն 'ի տկարէն: « Արդ յիշելով զքնութիւնդ, ոչ ամբարձցիս եր- « բեք. և յիշեցես զքեզ՝ եթէ հայեացիս 'ի քեզ »: « Ինչպիսի՞ զգայուն սիրութիւնք չեն ազգեր այս « առջերս մարդկային սրտից թելերուն: Սրբազնա-

գոյն պարտք մ'ալ շատ անգամ Բարսղի պերճա- « խօսութեան նիւթ կու տար. վկայի մը ողջակի- « զումն 'ի Քրիստոս՝ կը գրգէր կը յորգորէր քրիս- « տոնեայ ժողովուրդը յեկեղեցիս ընթանալու, « լսելու այն արիական մարտիրոսաց հանգէսը. ոչ « սոսկ վարուց պատմութիւնն էր զոր հոն կը հիւ- « սէր ճարտարաբան շրթունքն, այլ աստուածային « կայծակ մ'էր՝ որ սրտէ 'ի սիրտ հաւատացելոց « եռանդը կը վառէր՝ յառաքինութիւնս գիմագրա- « ւելու, ինչպէս կ'ըսէ. « Չպատերազմաց քաջու- « թիւնս նկարիչք բազում անգամ թէ պարտ է՝ « նշանակեն, և ոմանք բանիւ զարդարեն, և ոմանք « 'ի տախտակս գծագրեն, և զբազումս զարթու- « ցանեն առ 'ի քաջութիւն երկողեան »: նոյնպէս « նահատակելոց ներբողեանքը և վարքը պիտի ըլլան « օրինակ առաքինեաց: Ետ ներբողեան խօսած է « Բարսեղ այսպիսի առթով, ինչպէս են 'ի Ս. Քա- « ռաստունսն, 'ի Յուզիտա, 'ի Բարդաամ, 'ի Քոր- « դիոն, 'ի Մամաս. սակայն երեւելագոյն տեղին ու- « նի իրաւամբ Քառասնիցը, թէպէս մէկալնոնց մէջ « ալ անպակաս են առանձին և մասնական գեղեց- « կութիւնք: Պերճախօսն ալ կարծես թէ ինքնին « Քառասնից հետ կը զրահաւորի, պատերազմին « ճակատը կը գիմէ. բազանեաց գիմողին հետ ցա- « ւակից և նորահաւասին հետ ուրախակից կ'ըլլայ. « մինչև բուռն եռանդեամբ աշխուժից չափազանց « ձևերու մէջ կ'իյնայ, շատ անգամ երկայնաբան և « ոչինչ մասանց թուարկութեանը կ'իջնէ: Լսենք « պահ մը անկելոյն և նորահաւասին տողերը. « Իսկ « մի ոմն՝ ի թուոյն տատանեալ 'ի չարեացն գասալիք « եղեալ գնաց, անպատում սուգ սրբոցն թողեալ. « այլ ոչ եթէ զնոցա ազօթս անկատար լինել ե- « թող Տէրն. քանզի որ զպահպանութիւն վկա- « յիցն հաւատացաւ՝ մօտ էր, և ջեռնոյր 'ի կըր- « թարանի ուրեք, և ակն սւնէր ապառնեացն. « պատրաստ առ 'ի յընգունել զօրականացն փա- « խուցեալ զոք և ապրել. և մերձ գոլ բազանեաց « հնարիւք իմացեալ լինէր, երազ զօգնականու- « թիւն յեղաշրջելոցն խոտացեալ...: Իսկ մինչ « գեռ նոքա զայս ձգնէին, և նա միտ գնէր ելիցն, « ետես նոր տեսիլ իմն յերկնից իջեալ, և որպէս « 'ի թագաւորէ պարգևս բաշխէր զօրականացն, և « այլոցն ամենեցուն տային զպարգևն, բայց զմին « միայն թողուին առանց պարգևի, անարժան « համարեալ զնա երկնային պարգևացն, որ նոյն « ժամայն հրաժարեալ 'ի վաստակոցն, և առ յընդ- « գէմ ինքեան ընթացաւ: Ողորմելի տեսիլ այնո- « թիկ. զօրականն փախուցեալ, ախոյեանն գերի « վարեալ, Քրիստոսի ոչխարն քաղանակուր ե- « ղեալ. և ևս ողորմելի, զի 'ի յաւիտենից կե- « նացն վրիպեցաւ, և յայժմուս սչ վայելեաց. զի « նոյն ժամայն ընդ մտանէն՝ լուծեալ քակտե- « ցաւ մարմինն, և կենսաէրն անկաւ ընդ ունայ- « նութեամբ մահու: Իսկ նա իբրև ետես զխոտո- « րեալն 'ի բաղանիսն ընթացեալ, զինքն յանժուժ- « կալելոյն տեղին կարգեաց. և ընկեցեալ զարկա- « նելիսն, ընդ մերկան զինքն խառնեաց՝ ազաղակե- « լով զնոյն բարբառ ընդ սուրբսն, եթէ Քրիստո- « նէայ է՛. զվասն լուծելոյն զտրամութիւնն ին- « քեան յաւելուածովն միսթարեաց, նմանող ե- « ղեալ որք 'ի պատերազմունս ճակատուն որ յա- « ռաջին վահանակցութեանն անկեալ լինի, նոյն- « ժամայն ընուն զգասն, որպէս զի մի վահանա-

« կցութիւն նոցա կտրեալ եղիցի պակասելովն .  
 « այսպէս և նա արար . ետես զերկնային սքանչե-  
 « լիան , ծանեալ զճշմարտութիւնն , ապաւինե-  
 « ցաւ 'ի Տէր . թուեցաւ ընդ վկայսն , զաշակեր-  
 « տացն նուագեաց : Եւ Յուզա , և եմուտ Մատա-  
 « թիա . նմանեաց Պաւղոսի , որ երէկ հալածիչ և  
 « այսօր աւետարանիչ : Ի վերուստ և սա ընկալաւ  
 « զկոչումն . ոչ 'ի մարդկանէ և ոչ 'ի ձեռն մարդոյ  
 « հաւատաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
 « տոսի . մկրտեցաւ ոչ յայլմէ , այլ յիւրոց հա-  
 « լատոցն . ոչ 'ի ջուր միայն , այլ և արեամբ » :

Մինչդեռ Բարսեղ այս հրաշանշան ճառիւքն կը պճնազարդէր քրիստոնէական բեմերը , հաւա-  
 տացելոց ոգիքը և բարբը յուզողութիւն կը վերա-  
 բերէր , կը հերքէր օտարախորթ ազանդները . ան-  
 դին յԱրևմուտս Ս . Սմբերոսիոս իրեն Վեցօրէից  
 ճառերուն նախատիպ օրինակ կ'ընտրէր Բարսեղի  
 Վեցօրէայն , և Հռուփինոս 'ի լատին կը փոխադրէր  
 յունական բնագիրը : Չանցան շատ ժամանակք՝  
 երբ իմաստնացեալ և իմաստացուցիչ մեր թարգ-  
 մանիչք ալ ժիրաժիր մեղուաց պէս յԱթէնս , 'ի  
 Բիւզանդիոն , յԱղեքսանդրիա , 'ի Վեսարիա կը  
 թեւածէին , մատենագրութեանց ծաղկունքը ժո-  
 ղովելու : Ոմանք Ոսկեբերանի պերճախօսու-  
 թեամբ զմայլած , ոմանք Արիստոտէլի ցամաք ձե-  
 ւոցը հարուած՝ հայկական լեզուն զանազան ճիւ-  
 ղերու մէջ կը ջանային վարժեցընել . իսկ Վեցօրէայն  
 Բարսեղի ընտիր և ողորկ հայկալեզու փափկավանկ  
 գրչի մը հանգիպած կ'երևի . թարգմանն բանա-  
 սաեղծ է քան զՆիկիական , աւելի յարգարուն և  
 զարգարուն պարբերութեամբք : Փոփոխ շարա-  
 գրութեամբք , ինչպէս նիւթոց զանազանութիւնն  
 ալ կը բերէ , կը զարմացընէ ու կը յափշտակէ  
 զընթերցողս . չունի այն միակերպութիւնն՝ զոր  
 ոսկեբերանեան ճառից մէջ կը տեսնենք հանդերձ  
 իրենց ամենայն կատարելութեամբքը : Մինչ Բար-  
 սեղ լակոնական և իմաստասիրական զուսպ ոճը  
 կը նախագասէ քան զընդարձակութիւնն ոճոյ ,  
 ընդհակառակն հայ թարգմանն կ'ախորժի բանա-  
 սաեղծական թախը . շատ անգամ իր արեւելեան  
 պերճ հագուստը , մարգարտազարդ բեհեզները կը  
 սփռէ յունական պարզութեան վրայ , չըսեմ՝ թէ  
 կը քողարկէ զայն և կ'ընկրղմէ : Ետ անգամ կ'ո-  
 գևորէ , կը շնչաւորէ բնագրին համառօտութիւնը  
 և գեղեցիկ յտակաբանութեամբն չի ձանձրացը-  
 նէր մտադիր ընթերցողը : Թերևս վարդապետա-  
 կան աստիճանի անձ մը եղած ըլլայ Վեցօրէից  
 թարգմանն , վասն զի այն մասերուն մէջ աւելի  
 ճոխութիւն մը կը ցուցընէ , և մեծապէս կը խորշի  
 'ի հեթանոսական կարծեաց . մինչև առաջին ճա-  
 ուին մէջ ամբողջ թողած է այն հատուածը՝ յորում  
 կ'երևի թէ Ս . Բարսեղ հաւանութիւն մը կը ցու-  
 ցընէ որոգիներան կարծեաց , որ կ'ըսէր թէ նիւթա-  
 կան աշխարհէս առաջ՝ իմացական աշխարհք մը  
 կար , և այս իմացական աշխարհս ուրիշ բան չէր  
 բայց եթէ Բան . « Քանզի էր ինչ , որպէս թուի ,  
 « և նախ քան զայս աշխարհս , որ թէպէտ մտաց  
 « մերոց իմանալի , այլ մնաց անպատում , զի չէր  
 « պարտ և պատշաճ այն ինչ խրատելոց և որ դեռ  
 « տղայք էին 'ի գիտութեան : Էր կարգ իմն՝ երէց  
 « քան զարարած աշխարհիս՝ երկնայնոց զօրու-  
 « թեանցն 'ի ճահ , անժամանակ , յաւիտենա-  
 « կան , մշան ջենաւոր . յորում արարիչն ամենայնի

« և հաստիչ կատարեաց զարարածս իւր , զլոյսն  
 « իմանալի՝ 'ի գէպ որոց սիրենն զՏէր , զխօսուն  
 « և զաներևոյթ բնութիւնս , և զամենայն յօրի-  
 « նուածս իմանալեաց՝ որ 'ի վեր են քան զմեր  
 « միտս , զորոց և զանուանս չէ հնար գտանել . և  
 « սոքա զաներևոյթն աշխարհի բովանդակեն զէու-  
 « թիւն , որպէս ուսուցանէ զմեզ Պաւղոս ասե-  
 « լով . Զի նովաւ հաստատեցաւ ամենայն , որ ե-  
 « րևին , եթէ աթոռք եթէ տէրութիւնք , եթէ  
 « պետութիւնք , եթէ իշխանութիւնք , եթէ զօ-  
 « րութիւնք , եթէ հրեշտակաց բանակք , եթէ  
 « դապ հրեշտակապետաց » :

Սակայն գալով մեր թարգմանչին՝ տեսնենք որ-  
 չափ օգուտ կրնայ քաղուիլ հայ լեզուի համար  
 միայն աս թարգմանութենէ : Եթէ աւելի ճիշդ և  
 սեղմ ըլլար թարգմանութիւնը , Վեցօրէից ճառե-  
 րէն զանազան օգուտներ կրնայինք քաղել . բու-  
 սաբան մը կ'ունենար աչքին առջև շատ մը բա-  
 ուեր՝ որոնց համար հիմայ տուայտանօք կ'աշխատի  
 անուններ յարմարցընել . կենդանաբան մը կրնար  
 ինքն ալ իրեն մասը հարստացուցնել . բայց ամե-  
 նէն աւելի երկրաչափ մը և բնախօս մը լիովին կր-  
 նային ամբարել իրենց պէտք եղած բաները : Ահա  
 ասոնց վրայ կայացած է մեր թարգմանչին էական  
 պակասութիւնը . բնախօսական և իմաստասիրա-  
 կան գրութեանց երբ կը հասնի՝ Բարսեղ և իր  
 թարգմանը իրարու հակոտնեայք են , գէմ ընդ-  
 գէմ կ'ընթանան իրարու , թէպէտ և երկու երեք  
 քայլերէ վերջը նորէն զիրար կը գտնեն . « Անբա-  
 « ժին մարմինքն (կամ մանրամաղ փոշին) , կ'ըսէ  
 « Բարսեղ ըստ իմաստասիրաց գրութեան , երբ  
 « իրարու հետ միանան կամ իրարմէ բաժնուին ,  
 « ծննդեան և ապականութեան պատճառք կ'ըլ-  
 « լան . և ամենէն հաստատուն կամ պինդ մար-  
 « մնոց դիմացկունութեան պատճառն է այն մար-  
 « մնոց ամուր զիրար բռնելն » . իսկ Հայն կ'ըսէ .  
 « Եւ 'ի մանրամաղ փոշոյն , որ կցեցաւ եկն  
 « յարեցաւ 'ի միմեանս , կանգնեցաւ եկաց աշ-  
 « խարհս ամենայն . և անախ առին իւրաքանչիւր  
 « ամենայն իրքն զմեծութիւն , կէսքն 'ի խտանալ ,  
 « կէսքն 'ի պնդել , կէսքն 'ի լոյծ բնութիւն , կէսքն  
 « 'ի լինել եղծանելոցն , կէսքն կալ մնալ մշանջե-  
 « նակացք » : Ուրիշ տեղ մ'ալ Բարսեղ կ'ըսէ .  
 « Երբ արեգակը կրկներևոյթներ ունենայ , օ-  
 « դային փոփոխմանց նշան է » . իսկ Հայն կ'ըսէ .  
 « Յորժամ յամպոյ ամպ մասնիցէ և ելանիցէ  
 « արեգակն՝ զՎերմակիծ շող ամպն յերկիր տա-  
 « քելով , զնոնաւութիւնն օդոցն յայտ աւնէ » :  
 Բարձեալ երբ կը սկսի քննել թէ երկիրս ինչ բանի  
 վրայ հաստատեալ է , փոխանակըսելու՝ թէ « Երբ  
 « որ այսպէս շարունակ նոր նոր հաստատու-  
 « թիւններ փնտաւելու ըլլանք երկրիս՝ յանհունս  
 « կ'ընթանանք . և որչափ այս արամաբանութիւն-  
 « ներս ընդարձակենք՝ հարկ կ'ըլլայ անչափ աւելի  
 « զօրաւոր հիմ մը գանալ՝ որ կարենայ երկրիս  
 « ծանրութիւնը վերցընել » . այսպէս անիմանալի  
 բաւղին մէջ կը ձգէ զմեզ Հայ թարգմանն ու կ'ըսէ .  
 « Եւ յամենայնէ յայնմանէ՝ զոր լուծանիցեմքն և  
 « կապիցեմքն , յանյաւ և յանի քննութիւնսն  
 « անկանիմք , և անկայան պատսպարին գիւտիւքն  
 « մերովք , աստանդութիւնքն օգտակար իրացն  
 « մերոց առնեմք . և որչափ թոյլ տացուք երթալ  
 « արձակերասանակ մտաց մերոց 'ի խնդիրս՝ որ

« լուծանեն զընկերս իւրեանց՝ միայն գտանեն » :  
Բայց թերևս անհաճոյ բան մը չըլլայ ընթերցո-

ղաց՝ եթէ գնենք ուրիշ ասոր նմաններն ալ յոյն և  
հայ դիմացէ դիմաց :

ՀԱՅ .

ՅՈՅՆ .

Եւ ոչ զօրութիւն բազմութեանն ջուրց ան-  
զընդոց էր հակառակ :

Հակառակ զօրութեանց բազմութիւնը չէ որ  
անդունդք կը կոչուի . (վասն զի Որոգինէս կ'ըսէր  
թէ սուրբ գրոց անդունդք բառը կը ցուցընէ այն  
տեղը՝ ուր դէք կը բնակեն) :

Վասն այնորիկ ասեն ժամապահ գիրք մուծա-  
նել միանձնութեան և զարմանալով զիշատակ  
նորա :

Վասն զի դիտեցին տեսան (առաջինքն), որ Ս .  
Գիւրք յատկաբար և մասնաւորապէս կը յիշա-  
տակէ , և հողմ Աստուծոյ ըսելով ուրիշ բան չի-  
մանար՝ բայց զՀոգին սուրբ Աստուծոյ :

Եւ ջուրք հաճոյ աչաց հայելոյ , ոչ միայն զի լու-  
սաւորեացն զնոսա , այլ և յիւրեանց լուսաւորու-  
թենէ անտի առաքեն լոյս՝ լուսաւորել զայլ տե-  
ղիս . ըստ օրինակի , որպէս երևի յորմս ՚ի լուսա-  
ւորութենէ ջուրց , և առնու վազս յայսկոյս յայն-  
կոյս , և մեծապայծառ լուսաւորութիւնն՝ որ ծա-  
գէ ՚ի նոսա , զեռայ խաղայ ՚ի նոցանէ յայլ տեղիս :

Ջուրերը աւելի վճիտ և պայծառ կ'ըլլան , ոչ  
միայն անով որ լոյս կ'ընդունին , այլ և բեկբեկմամբ  
կ'անդրադարձընեն իրենց լոյսը , և չորս կողմ կը-  
սկըսին լուսոյ խաղուն ճառագայթներ վազվըզել :

Արդ եթէ օր ասիցես և եթէ աշխարհ՝ զնոյն  
զմին ասիցես :

Եթէ օր ըսես , եթէ յաւիտեան՝ նոյն բանն է .  
(αἰών բառէն կը շփոթի թարգմանն , վասն զի բառս  
երկուքն ալ կը նշանակէ) :

Իսկ արտաքինքն զլի ինչ և զսեղմ՝ անուանեն  
հաստատութիւն . և յորժամ գայ լինի ՚ի լայնու-  
թիւն և ՚ի խորութիւն և ՚ի բարձրութիւն , և ու-  
նի իւր նմանակից ուժգնութեամբ .

Իսկ արտաքինքն հաստատուն մարմին կը կոչեն  
որ և իցէ սեղմ և լեցուն բանը՝ չափաբերականէն  
որոշելու համար . արդ չափաբերական մարմինն  
է՝ որ միայն երեք տարածութեամբք չափի , այս  
ինքն լայնութեամբ , խորութեամբ և բարձրու-  
թեամբ , իսկ հաստատունն ասոնցմէ զատ ունինաւ  
պնդութիւն (կամ խստութիւն) :

Աստեղք , որ կոչին մոլորեցուցիչք :

Մոլորակ աստեղք . (կրաւորակա՝ բայն ներ-  
գործական շրջելով թարգմանած է հայն) :

Է միւս ևս թռչուն՝ որ ՚ի հողմոյ ծնանի :

Բայց կան ալ՝ որոնց ձուք անծնունդք են :

Եթէ ասոր նման և ասոնցմէ ալ աւելի այլայլեալ  
օրինակներ ուզէինք բերել , գրեթէ Վեցօրէից մեծ  
մասը հարկ կ'ըլլար օրինակել : Իսկ բուսաբանու-  
թեան և կենդանաբանութեան բառեր շինելու շատ  
չափատիր թարգմանն , այլ շատ տեղ ինչպէս ՚ի  
յոյնն կը գտնէ՝ տառադարձութեամբ ՚ի հայ կը փո-  
խէ , Կոնիոն , Եղէբորոս , Անիսիփոն , Մեհոնիոն , Պե-  
լէս , Սփինոս . - Կարիինոս , Պողոտոպէս , և այլն , և այլն :  
Ասոնք են այն սովորական պակասութիւններ զոր ՚ի  
Վեցօրէից թարգմանութեան կը տեսնենք . բայց  
ինչպէս առաջ ալ ըօինք՝ անթիւ են այս օրինակ-  
ներս և աւելորդ կը համարինք մէջ բերելու : Այս  
վերի ըսածներէս յայտնի կը տեսնուի որ մեր թարգ-  
մանին շատ հմտութիւն ունեցած պիտի չըլլայ ի  
մաստասիրական և արտաքին ուսմանց : Անհմտու-  
թիւն կը տեսնուինաւ աշխարհագրական անուանց  
մէջ , յորս կարելի չէ որ օրինակողն սխալ գրած  
ըլլայ . օրինակ իմն շատ տեղ յունական յօդն ալ  
անուանց հետ կը միացընէ և կըսէ Ուստոպէս , փո-  
խանակ ըսելու Քոստոպէս . Ովփասիս (Փասիս) . և  
կ'ըսէ դարձեալ Բարսապէս . կարծեմ համատարած  
աշխարհագիր տախտակաց վրայ ալ այս անունս  
չի գտուիր . բայց կրնանք արդեօք յայսմ ալ տգի-

տութիւն ենթադրել , և համարիլ թէ Հայաստա-  
նի գետ մը՝ որ թարգմանչին ամենածանօթ պիտի  
ըլլար՝ այս փոփոխութիւնս կրած ըլլայ . մեր Երա-  
խը որ յունարէն կըսուի Ἄραξոս եղած ըլլայ Բա-  
րսապէս . ասոնց քով շատ դժուարին չէ գուշակելը  
թէ Բիւրիփոն կամ Բարսափոնայ իղի կոչուածն՝ ըլ-  
լայ Բիւրիփոնիս :  
Հանդերձ այս մեծամեծ պակասութիւններով  
ալ , ունի դարձեալ այն մեծ յարգը և անհամե-  
մատ արժէքը՝ որ այնպիսի դիւթիչ հայկաբանու-  
թեամբը տեղ տեղ կը ճախրէ կը բարձրանայ քան  
զբնագիրն . սքանչելի են ծովուց , գաշտաց և մար-  
գաց սակաւատող նկարութիւնքն , կենդանեաց  
բարուց ստորագրութիւնքը , որք աւելի ճշգրտոյն  
կ'ընթանան բնագրին հետ , առանց ստուեր մ'ալ  
կորսընցընելու բնիկ գեղեցկութենէն : Ամենայն  
նկարագրաց օրինակ կրնայ ըլլալ Մեղուին ստո-  
րագրութիւնը , յորում թէպէտ Վիրգիլեայ հա-  
մառօտութիւնը չտեսնենք , սակայն իրեն ընդար-  
ձակութեանը մէջ պահած է ամբողջ իր գեղեց-  
կութիւնը . զոր և Ս . Սմբրոսիոս գրեթէ բառ առ  
բառ կը թարգմանէ իր Վեցօրէից մէջ : Լսենք նախ  
Վիրգիլեայ պարզութիւնը .

Եկ արդ, բեր ըզմեղուաց նորոգատուր յԱրամազդայ  
 Ըզմեղութիւնս առից ոգել. որում փոխան նորա շնորհին  
 Նուագաւոր հընչմանց կուրեանց եւ ձայնատու պղընձոյն ըզհեա  
 Զերկնից արքայն սընուցին 'ի քարայրին գիկաէական:  
 Սայք եւեթ ըզծընունդս հասարակաց ունին և զտունս,  
 Միաժողով 'ի քաղաք՝ մեծ օրինոք վարեալ կենցաղ.  
 Սորա միայն գիտեն անդեդեւ յարկս եւ հայրենիս.  
 Հանգերձեալ ձըմերայնոյն յամարայնի յառաջատեսք  
 Զեռն 'ի գործ արարեալ եւ 'ի միջի զգիւտսըն դընեն:  
 Քանզի կէսք ըսկեն ռոճկաց դաշամբք ուխտից յանդըս ճըզնեալք,  
 Այլք 'ի յորմածըս դաւթիցն առեալ զարտօսը ըզնարգիսի,  
 Եւ սինձ թանձր 'ի կեղեւոց՝ դընեն մաղոց հիմն առաջին,  
 Եւ ըզկնի կառուցանեն այնուհետեւ ըզմումըն մած:  
 Ըզզարգուն մանկութիւն՝ ըզյոյս ազգին դայեկեն կէսք,  
 Այլք ըզմեղըն սուրբ սերտեալ պարզեն բըջջաց լոյծ օշարակ:  
 Են՝ եւ ոյց առ դուրս եհաս վիճակ պահպանութիւն.  
 Եւ դէտ կան փոխանակաւ ամպոց երկնից և անձրեւաց,  
 Զեկաւորաց կամ ըզրեռն առնուն, կամ գունդ հրոսակ կապեալ  
 Ըզգոռեխսըն ջոկ անգործ հանեն վանեալս 'ի սըրահից.  
 Վաստակն եռայ եւ բուրէ մեղը 'ի ծոթոր անուշահոտ:  
 Զերդ կիկլոպայք երբ հապճեալ՝ շանթս 'ի հալուն դարբենն ձուլից,  
 Կէսք 'ի փուքս արջառենիս ըզսիքս օդոց առնուն եւ տան,  
 Ըզպըղինձսըն շառաչուկս 'ի լիճ մըխեալ ջըրդեղեն այլք:  
 Ի ներքոյ կանգնեալ սալիցն Յանէ 'ի թոպ թընդեալ հեծէ,  
 Նորա զբազուկս ընդ իրեար մեծաւ ուժով բառնան կարգաւ  
 Եւ ամրապինդ արցանօք կալեալ զերկաթըն շըրջըրջին.  
 Ոչ ընդհատ, օրէն թէ զփոքը ընդ մեծ իցէ համեմատել,  
 Ընգարոյս սէր համբարոց ըզկեկրոպեան ճեպէ մեղուս՝  
 Ըզմէն մի յիւր ըսպասուն. հինօրէից՝ 'ի խնամս աւանք,  
 Պահել ըզպան խորըսիաց և տուն կազմել ամենարուեստ.  
 Իսկ մանկագոյնք յանագան դառնան պահու վաստակարեկք  
 Ծոթընով բարձք հոծեալ, կըծեն աստ անդ եւ ըզմաթուզ,  
 Խաժագոյն զուռենիս, ըզէկ քըրքում եւ ըզնարգոս,  
 Ըզթըմբի պարարտաբեր եւ ըզյակինթըն զերկնագոյն.  
 Մի հանգիսս գործոյ բնաւից, մի բոլորից աշխատութիւն:

« Ոչ, որպէս աստ առ մեզս լինի՝ զի վասն փափ-  
 « կութեանց և գրգութեանց ցանկութեանց գլին  
 « անկանին մարդիկ յիշխանութենէն, նոյնպիսի  
 « ինչ և առ տկար ազգս թռչնոց գաանիցի. այլ  
 « յընտաբոյս բնութենէ ունին զիշխանն առ 'ի  
 « կարգել 'ի նոսա զկարգս արժանաւորս: Եւ այն-  
 « պէս ունին ազնուական արգասիս յանձին, շքեղ  
 « մեծութեամբ, գեղեցիկ կերպարանօք, հեզ, ցած  
 « և համեստ: Ունի խայթոցս և թագաւորն, բայց  
 « ոչ ինչ ումք մեղանչէ. քանզի օրէնս անգիրս  
 « ընտաբոյս բնութեամբ ունի առ 'ի յօրինուած  
 « անձանց թռչնոցն, և որ ոք անցանէ զօրինօքն՝ գը-  
 « տանէ 'ի նոցանէ մնաս անձինն: Եւ նոյն իսկ մե-  
 « ղուքն, եթէ ոչ անսայցեն երթալ զհետ բարոյից  
 « առաջնորդացն՝ զոր ունին գլուխս, վաղվաղակի  
 « զղջանան ընդ ժպրհուութիւնն՝ զոր գործեն. քան-  
 « զի իբրև հարկանեն զոք խայթոցօքն, անդէն  
 « ինքեանք մեռանին: Նմանեսցուք առանձնագործ  
 « գործոցն մեղուի, զոր իւրովին իւրոյ անձինն  
 « համբարէ. զի զինչ որ ոչ իւր իցէ՝ զայն ոչ ապա-  
 « կանէ. և այլոց արարածոց ոչ առնի մնասա-  
 « կար, այլ անձամբ ինքն իւր համբարս համբարէ:  
 « Զմաղսն մեղերն մոմակերտ գործով շինեալ յար-  
 « գարէ. և զմում մաղուցն 'ի ծաղկաբեր մարգոցն՝  
 « մեծաւ փութով անգագար ժողովէ. և զմեղըն՝  
 « որ նման ցօղոյ զքարամբք և զոստովք և զտերևօք

« ծորեալ իջեալ կայ, քաղեալ առեալ 'ի բերանն  
 « ճեպով բերէ, և 'ի խորս մոմակերտ գրոցն ունչա  
 « արկեալ համբարեալ գնէ: Եւ յառաջին նուագին  
 « 'ի սկիզբն սկսուածոյ գործոյն անգայտ մաղովք  
 « անօսը գործոյն զգործած գրոցն յօրինէ, վասն  
 « ջրի և լոյծ նորոգ զմեղըն ժողովելոյ: Իսկ յոր-  
 « ժամ յաճախեալ բազմասցի մեղըն, խաւ 'ի խաւ  
 « մթեր առ մթեր ժողովեալ կուտիցէ, և բազմօ-  
 « րեայ ժամանակօք 'ի վերայ անցեալ գտանիցին,  
 « իբրու թէ առաւել իմն առաւելութեամբ հա-  
 « սեալ եփեալ գեղեցկանայ ապա յետ այնը ամե-  
 « նայնի:  
 « Ապա ուրեմն բարիոք գովեցաւ մեղու 'ի Սո-  
 « զմոնէ յառակս օրինակաց նորա, և իմաստունն  
 « և հանձարեղ անուանեաց զնոսա 'ի գործ: Եւ  
 « մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ  
 « առնէ անձամբ անձին դագարս, և զվաստակա  
 « նորա թագաւորք և տնանկք 'ի բժշկութիւնս  
 « մատուցանեն: Որ հնարագէտ իմաստութեամբ  
 « 'ի շտեմարանս մեղը կազմէ, և մեծապանչ գոր-  
 « ծով առագաստաձև թաղանթազարդ խերեէչս  
 « խերեէչս զմոմն անօսրէ, և անդէն 'ի նմին խիտ  
 « առ խիտ մի առ միոջ գորակաձև բոլորակս ըզ-  
 « ծակս գրոցն բոլորէ. որմ յորմ կցեալ, 'ի մի շի-  
 « նուած կատարեալ, միմեամբք զմիմեանս հաս-  
 « տատեալս, զբազումս 'ի մի գործ շինուածոցն

« բովանդակեալս . և այսպէս բազում գուրք մո .  
 « մակերոք զմիմեամբ հոժ՝ հանդէպ միմեանց  
 « հայեցեալս , մի զմիով յարեալս : Եւ դարձեալ  
 « անդրէն ՚ի նմին շինուածի գտանես յարկս զյար .  
 « կովք շինեալս՝ երեքգմբէթակիրս զմիմեամբք յօ .  
 « բինեալս . և բերանք գբոցն ոչ գէպ ուղիղ մի .  
 « մեանց հանդիպեալք , այլ ՚ի կողմանց անկեանց  
 « գբոցն սկիզբն արկեալ և համբարձեալ՝ ըստ օրի .  
 « նակի առաջին գբոցն , և զնոյն ծածկեալ խաղա .  
 « ղեալ մոմակերտ ծեփօքն՝ սահմանեալք անջրք .  
 « սեպեալ զատեալ առ ՚ի միմեանց , միմեամբք  
 « մեկնեալ : Այնքան մեծաւ զգուշութեամբ և  
 « հնարագէտ իմաստութեամբ փութացեալ ձեպին  
 « անշարժ զշինուածն հաստատել , զի մի յորժամ  
 « թափանցանց ծակք գբոցն բերան ՚ի բերան զմի .  
 « մեանս համբուրիցեն , ծանրաբեռն ծանրութիւն  
 « մեղերն սարուտակատ լաստակոտոր զգուրս  
 « մաղոցն առնիցէ , և իւրովն յեակախաղաց խո .  
 « նաւութեամբն արտաքոյ ամրածածուկ շտեմա .  
 « րանացն ծորեալ ելեալ հեղուցու :

« Եւ արդ եթէ միտ եգեալ հայիցիս ընդ զար .  
 « մանակերտ կազմութիւն շինուածոյն ճարտա .  
 « րութեան , զգիւտս երկրաչափ ճարտարութեան  
 « իւրով բովանդակ հնարագէտ իմաստութեամբն  
 « տեսանես : Զի վեց անկեամբք առ հասարակ ա .  
 « մենայն կողմամբք գբոց մաղոցն հաստատեալք ,  
 « ոչ ՚ի միմեանս հայեցեալք և ոչ մի ՚ի վերայ միոյ  
 « գիղեալք , զի մի յողջողգեալք խորտակեսցին  
 « մոմակերտ հիմունք մաղոցն . քանզի ոչ եթէ ՚ի  
 « վերայ հաստաբեստ ինչ զօրութեանց հիմունք  
 « մաղոցն հաստատեալ իցեն , այլ ՚ի վերայ բա .  
 « զում յողջողգութեան և անզօր պատրաստու .  
 « թեան : Եւ նոցա հնարագէտ հնարիւքն զան .  
 « կիւնս կողմանց գեանատանցն՝ սիւնս և մոյթս  
 « հաստատեալ ընդ նեցուկս երկրորդն յարկաց .  
 « զի մի յորժամ մեծաբերձ բարձրութեամբ շի .  
 « նուածն ՚ի վեր համբառնայցէ , ծանրութիւն  
 « վերնատանցն ոյժ ՚ի ներքնատուենն տայցէ , և  
 « կքեալ իջեալ ամենևին յերկիր կործանեսցի .  
 « այլ իւրաքանչիւր ծակք գբոցն յիւրաքանչիւր  
 « կարգս հաստատեալք , յորժամ անկանիցի ՚ի  
 « նոսա խոնաւութիւն մեղերն՝ բաւական լինիցի  
 « հանդուրժել » :

Եկեղեցական պատարագամատոյցք ալ բազում  
 ինչ պարտական են Բարսղի . որոյ սրբութեան և  
 հանձարոյ արգասիք է գրեթէ բովանդակ պատա .  
 րագամատոյցն զոր յունական եկեղեցին կը գոր .  
 ծածէ : Ասկէ ալ շատ աղօթք առած թարգմանած  
 են մեր եկեղեցական սրբազան հարք , և անով ճո .  
 խացուցեր հայկական եկեղեցին . այս աղօթքներն  
 են՝ « Աստուած , Աստուած մեր , որ զերկնաւոր  
 « հացք » . . . : — « Տէր Աստուած մեր , որոյ կա .  
 « րողութիւնդ անքնին է և փառք » . . . և բովան .  
 գակ մինչև ՚ի Հաւատամբն : Իարձեալ՝ « Ոչ ոք է  
 « արժանի յրմբունելոցս » . . . : — Մնացեալներէն  
 ալ շատը ՚ի Ս . Բարսղէ թարգմանուած է :

Այսպիսի էր Բարսեղ , Եկեղեցւոյ ամենամեծ  
 Ս . Հարց մէկը , որ իրեն բոլոր կենօրը վաստակե .  
 ցաւ յօգուտ ՚ի պայծառութիւն եկեղեցւոյ թէ  
 անձնական օրինակօք և թէ անմահ գրուածնե .  
 րովը , թողլով յետագայից աստուածաբանու .  
 թեան յորդառատ և անսպառ ազբիւր մը . որոյ  
 համար կ'ըսէ երևելի գաղղիացի բանասէր մը .

« Զկայ հեղինակ մը որուն գրուածքն այնպիսի  
 « ազգեցութիւն մը ընէ ինչպէս Սրբոյն Բարսղի .  
 « այնպէս ուժով կը տրամաբանէ և այնպիսի զօ .  
 « րութեամբ կը հերքէ , այնքան ահաւելի կը նկարէ  
 « զմոլութիւն , այնչափ ՚ի համոզումն կը նուաճէ  
 « զայլս , այնպիսի ընդարձակ խրատներ և յորդօ .  
 « րակներ կը խօսի՝ որ անկարելի է առանց յաղ .  
 « թահարուելու կարգալ իր ճառերը : Իրեն պեր .  
 « ճախօսութիւնը զոյգ կընթանայ ընդ վարդապե .  
 « տութեան . կը հրահանգէ , կը զմայլեցընէ և կը  
 « զգացընէ : Բացարարութիւնքն վսեմ , ոճն պեր .  
 « ճախօս , յստակ և համոզիչ , միշտ բնական , ան .  
 « պաճոյճ և սահուն . միով բանիւ հաւասարազօր  
 « Իեմոսթենի և ուրիշ հին երևելի հանձարից » :

Ա . ՍՈՒՔՐԵԱՆ

ՕՐԻՆԱԿ ԽՈՍՏԱԳՐԻ ԽՆԱՄԵԽՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԴՐԱՆՍԻԼՈՒԱՆԻՈՑ

Դրանսիլուանիոյ գաղթական Հայոց լեզուին  
 վրայօք՝ շատ տարի առաջ օրագրիս մէջ տեղեկու .  
 թիւն տուած եմք . լեզուէն աւելի ընտանեկան  
 կենաց սովորութեան հետաքնին յիշատակ մը հա .  
 մարիմք՝ իրենց խնամխօսութեան պայմանագիրը .  
 այսինքն փեփին և հարսին ծնողաց՝ երկու կող .  
 մէն պահանջանաց և խոստմանց գրաւոր դաշնա .  
 գրութիւնը զոր իրենք վայելուչ բառով մը Գրօ .  
 ղէն կոչեն , անշուշտ իրենց նախնեաց աւանդու .  
 թեամբ : Ասոնցմէ քանի մը հատ տեսնելով , ա .  
 մենքն ալ ասկէ 100 կամ 120 տարի առաջ գրուած ,  
 մէկը կը հրատարակեմք , իմացընելով որ ամենն  
 ալ նման են ոճով և լեզուով : Այս ետքինս , ինչ .  
 պէս կը տեսնէ ընթերցողն , Մաճառի , Վլաչի ,  
 Թուրքի բաւերով հարուստ զանգուած մ'է . ա .  
 նոր համար հարկ է ծանօթութեամբ բացատրել ,  
 գոնէ առջինները . բայց և այնպէս հայերենի ա .  
 խորժ յատակ կամ հիմ մը կայ . որ գուցէ լե .  
 զուէն աւելի ընտանեկան և գորովական ոճովն  
 աւելի ախորժական է :

Նշանաւոր է փեփին ծնողաց տրոց առ հարսն  
 Երեւոյր կոչումն . մինչդեռ հարսին ծնողաց առած  
 օժիտն՝ թուրք բառով ճկել կոչուի : Արդեօք աս .  
 կէ 4000 տարի առաջ Գերարայի թագաւորին առ  
 Աբրահամ տուած 2000 արծաթն , և առ Սառա  
 ըսածն , « Այն եղիցի ՚ի պափ- երեսաց քոց և ամե .  
 նայն կանանց որ ընդ քեզ են » , և մեր Դրանսի .  
 լուանիացի Հօբիսին համար տրուած 200 ոսկի Ե .  
 րեսջուրն նոյն սովորութեամբ չէն :